

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՄԻԳՐԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ
2005-2007 ԹԹ.

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ



«Ասողիկ» հրատարակչություն
Երևան
2007

ՀՏԴ- 338 (479.25) : 31
ԳՄԴ- 65.9 (2Հ) – 1 + 60.6
Ա 652

Մինասյան Աննա, Պողոսյան Ալինա, Հակոբյան Թերեզա, Հանչիլովա Բլանկա

Ա 652 Աշխատանքային միգրացիան Հայաստանից 2005-2007 թթ.:
Հետազոտություն: – Երևան, Աստղիկ, 2007 թ. – 84 էջ

Հետազոտությունը և գրքի տպագրությունն իրականացվել են ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

Սույն հրապարակման մեջ ամփոփված են հեղինակների տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի տեսակետներին:

ԳՄԴ- 65.9 (2Հ) – 1 + 60.6

ISBN: 978-99839-50-016-4

© ԵԱՀԿ, 2007

© Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ ՀԿ, 2007

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրապարակման բովանդակությունը կարող է օգտագործվել և արտատպվել կրթական և այլ ոչ կոմերցիոն նպատակներով, եթե նյութի ցանկացած մասն վերարտադրության դեպքում ԵԱՀԿ-ն և Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ ՀԿ-ն նշվում են որպես աղբյուր:

ՆԱԽԱԲԱՆ

Գլոբալիզացիան լայն հնարավորություններ է ստեղծում աշխատանքային միգրանտների համար, և աշխատանքային միգրացիան հավանաբար դեռ երկար տարիներ կկազմի միջպետական միգրացիոն հոսքերի գերակշռող մասը: Հաշվի առնելով աշխատանքային միգրացիայի տեմպը, ուղարկող և ընդունող երկրների կառավարությունների համար կարևոր է, որ գործընթացն իրականանա կարգավորված և լինի թափանցիկ:

Հայաստանի դեպքում՝ ելնելով բնակչության ավանդական միգրացիոն փորձից, կարգավորված աշխատանքային միգրացիան կարող է ելք լինել պոտենցիալ տնտեսական միգրանտների համար, ովքեր այլապես կարող են մշտապես լքել երկիրը՝ ավելի լավ աշխատանքային հնարավորություններ փնտրելու համար: Վերջին տարիներին Հայաստանից միգրացիան հիմնականում փոխակերպվել է աշխատանքային միգրացիայի: Չնայած Հայաստանի տնտեսական աճին, ծառայությունների ոլորտը և արդյունաբերությունը դեռևս հազարավոր գործազուրկների չեն կարողանում ապահովել աշխատատեղերով: Հին ենթակառուցների և ավանդական տնտեսական կապերի քաքայումից առավել տուժում են գյուղական համայնքները:

Երկու տարի առաջ, 2005 թ.-ին, ԵԱՀԿ Երևանի գրասենյակը նախաձեռնեց աշխատանքային միգրացիային նվիրված ծրագիր, որի շրջանակներում «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ն հետազոտություն անցկացրեց 2002-2005 թթ. Հայաստանից աշխատանքային միգրացիայի վերաբերյալ: Հետազոտությունը կենտրոնացել էր այնպիսի երևույթների վրա, ինչպիսիք են գործազրկությունը, տնային տնտեսությունների եկամուտները, վերջին տարիներին աշխատանքային միգրացիայի միտումները, Հայաստանից աշխատանքային միգրացիայի պատճառներն ու հետևանքները:

Հաշվի առնելով աշխատանքային միգրացիայի վերաբերյալ թարմ վիճակագրական տվյալների կարիքը, ԵԱՀԿ Երևանի գրասենյակը շարունակեց ծրագիրը 2007 թ.-ին և պայմանագիր կնքեց «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ի հետ՝ 2005-2007 թթ. ժամանակահատվածի համար նմանատիպ հետազոտություն իրականացնելու և երկու հետազոտությունների արդյունքները համեմատելու մասին: Ունենալով լուրջ հիմք՝ այս համեմատական ուսումնասիրությունն ավելի ճշգրիտ է ներկայացնում աշխատանքային միգրացիայի դինամիկան, ուստի արժեքավոր տեղեկատվություն է պարունակում քաղաքականություն մշակողների և լայն հասարակության համար:

Հետազոտության նպատակն է աջակցել Հայաստանի կառավարությանը աշխատանքային միգրացիայի գործընթացի և միտումների վերաբերյալ

հավաստի տվյալների ձեռքբերման գործում՝ միգրացիայի կանոնակարգման ազգային հայացեկարգի և միգրացիոն քաղաքականության զարգացմանը նպաստելու համար:

Հուսով ենք, որ միջպետական միգրացիայի և, մասնավորապես, աշխատանքային միգրացիայի օրենսդրական դաշտի մանրակրկիտ վերլուծության հետ մեկտեղ, որը ԵԱՀԿ Երևանի գրասենյակը հրապարակել և ներկայացրել է շահագրգիռ կողմերին 2007 թ.-ին, սույն ուսումնասիրությունը կօգնի քաղաքականություն մշակողներին, գիտնականներին, միջազգային կազմակերպություններին, ՀԿ-ներին և պոտենցիալ միգրանտներին՝ ճիշտ գնահատել իրողությունները և հնարավոր լուծումներ գտնել առկա խնդիրներին:

«Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ի աշխատանքային քիմը շնորհակալություն է հայտնում ԵԱՀԿ Երևանի գրասենյակի տրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետ Դավիթ Հակոբյանին՝ այս զեկույցի պատրաստման վերջնական փուլում իր արժեքավոր աջակցության համար:

Աննա Մինասյան
«Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ նախագահ

Երևան, 2007 թ. հոկտեմբեր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
Հետազոտության շրջանակներն ու նախապատմությունը	7
Տվյալների հավաքագրման մեթոդաբանությունն ու ընտրանքը	8
<i>Տնային տնտեսությունների ընտրանքային հարցում</i>	<i>8</i>
<i>Խորին հարցազրույցներ աշխատանքային միգրանտների հետ</i>	<i>9</i>
ԳԼՈՒԽ 1. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	10
Տնային տնտեսությունների անդամների թիվը	10
Սեռատարիքային կազմը	10
Կրթությունը	11
Մասնագիտությունը	13
Սոցիալ-տնտեսական կարգավիճակը	14
<i>Տնտեսական ակտիվությունը և գործազրկությունը</i>	<i>14</i>
<i>Տնտեսական ակտիվության վրա ազդող գործոնները</i>	<i>15</i>
<i>Վիճակագրական տվյալներ գործազրկության վերաբերյալ</i>	<i>19</i>
Տնային տնտեսությունների եկամուտը	20
<i>Միջին ամսական եկամուտ</i>	<i>20</i>
<i>Տնային տնտեսության կենսամակարդակը հարցվողների գնահատմամբ</i>	<i>21</i>
<i>Տնային տնտեսության եկամուտի աղբյուրները</i>	<i>22</i>
ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	23
Ընդհանուր տվյալներ	23
Քաղաքային և գյուղական բնակչության միգրացիոն ակտիվությունը	25
Աշխատանքային միգրացիայի մարզային առանձնահատկությունները	26
ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	27
Սեռատարիքային կազմը	27
Ամուսնական կարգավիճակն ու ընտանեկան կապերը	28
Միգրանտների կրթությունն ու մասնագիտությունը	29
Միգրանտների զբաղվածության պատմությունը Հայաստանում	30
ԳԼՈՒԽ 4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ	32
2005-2007 թթ. աշխատանքային միգրացիայի քարտեզը	32
Ուղևորության նախապատրաստումը	34
Աշխատանքն ու եկամուտը ընդունող երկրում	35
<i>Ուղևորության սեզոնայնությունն ու իրական տևողությունը</i>	<i>35</i>
<i>Աշխատանք</i>	<i>36</i>
<i>Դրամական փոխանցումներ</i>	<i>39</i>
Կացարանային պայմաններն ընդունող երկրում	40

ԳԼՈՒԽ 5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	41
Աշխատանքային միգրացիայի պատճառները	41
Արդարացած և չարդարացած ակնկալիքներ	43
ԳԼՈՒԽ 6. ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	45
Ներքին միգրացիոն պոտենցիալը	45
Արտաքին միգրացիոն պոտենցիալը	46
<i>Աշխատանքային միգրացիա</i>	46
<i>Մշտական էմիգրացիա</i>	47
ԳԼՈՒԽ 7. ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԹՎԵՐԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ.....	48
Ովքեր են միգրանտները	48
Ինչու են մեկնում.....	54
Ինչպես են մեկնում.....	57
Ինչպես են աշխատում և ապրում արտերկրում	61
Ինչ հիմնախնդիրներ և կարիքներ են ունենում	65
Հետադարձ հայացք	67
Խորհուրդ են տալիս միգրանտները.....	69
ԳԼՈՒԽ 8. ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱ.....	70
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ.....	76
Աշխատանքային միգրացիայի հիմնական ցուցանիշները	76
Միգրանտների սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը.....	76
Միգրանտների զբաղվածությունն ու եկամուտը Հայաստանում	77
Ուղևորության պլանավորում.....	78
Աշխատանքն ու եկամուտը ուղևորության երկրում.....	78
Դրամական փոխանցումներ.....	79
Աշխատանքային միգրացիայի պատճառներն ու հետևանքները	80
Լուծում պահանջող հարցեր	81

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՐՁԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

2005 թ.-ին ԵԱՀԿ Երևանի գրասենյակը նախաձեռնեց Հայաստանից աշխատանքային միգրացիայի վերաբերյալ հետազոտություն (2002-2005 թթ.), որը 2005 թ.-ի փետրվար-մարտ ամիսներին իրականացրեց «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ն (ԱՍՏ): Հայաստանից աշխատանքային միգրացիայի վերաբերյալ այս առաջին համապարփակ հետազոտության արդյունքները 2006 թ.-ին հրատարակվել, ներկայացվել և քննարկվել են տարբեր պետական և ոչ պետական կառույցների հետ:

Հետազոտության առաջնահերթ նպատակն էր հավաքել հավաստի քանակական տվյալներ Հայաստանից միգրացիոն հոսքի ծավալների, ուղղությունների և միգրացիոն գործընթացի կազմակերպման վերաբերյալ, ինչպես նաև ստանալ աշխատանքային միգրանտների սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը: Հետազոտության արդյունքները համեմատվել են պաշտոնական վիճակագրական տվյալների և արտաքին միգրացիոն գործընթացների վերաբերյալ հետազոտությունների արդյունքների հետ: Այսուհանդերձ, համեմատական վերլուծությունն ուներ որոշ սահմանափակումներ: Նախ, տվյալները համեմատվել են մի շարք ուսումնասիրությունների հետ, որոնք իրականացվել են տարբեր հետազոտական մեթոդների կիրառմամբ: Երկրորդ, ինչպես պարզվեց, մի քանի հետազոտություններ անդրադարձել էին միևնույն ժամանակահատվածին, մինչդեռ որոշ տարիների վերաբերյալ տվյալներ ընդհանրապես չկային, ինչը սահմանափակում էր լոնգիթյուդային վերլուծության հնարավորությունը:

Հաշվի առնելով աշխատանքային միգրացիայի վերաբերյալ թարմ վիճակագրական տվյալների և շարժառիթային վերլուծության կարիքը՝ ԵԱՀԿ Երևանի գրասենյակը որոշեց շարունակել հետազոտությունը 2007թ-ին:

Երկրորդ հետազոտությունն իրականացրել է «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ն 2007 թ.-ի փետրվար-մայիս ամիսներին: Հետազոտության ընթացքում օգտագործվել են տվյալների հավաքագրման և վերլուծության քանակական և որակական մեթոդներ՝ տնային տնտեսությունների ընտրանքային հարցում և խորին հարցազրույցներ աշխատանքային միգրանտների հետ: Որակական հետազոտությունը թույլ է տվել բացահայտել աշխատանքային միգրանտների վերաբերմունքն ու կարծիքը միգրացիոն գործընթացին առնչվող տարբեր երևույթների վերաբերյալ՝ լուսաբանելով նրանց հուզող հարցերն ու արտերկրում աշխատելիս ունեցած խնդիրները:

Տնային տնտեսությունների ընտրանքային հարցում

Ընտրանքը. Հետազոտության արդյունքների հավաստիությունը, ինչպես նաև 2005 թ.-ի հետազոտության արդյունքների հետ դրանց համեմատելիությունն ապահովելու նպատակով հետազոտության ընտրանքի մեթոդաբանությունը մնացել է անփոփոխ: Հարցումն իրականացվել է երկու փուլով. ՀՀ բոլոր մարզերն ընդգրկող հիմնական հարցում՝ 1500 տնային տնտեսությունների հետ, և բացառող ընտրանքով լրացուցիչ հարցում 2005-2007 թթ. ընթացքում միգրացիոն գործընթացում ներգրավված 223 տնային տնտեսությունների հետ՝ ընդհանուր առմամբ 450 աշխատանքային միգրանտների մասին տվյալներ ունենալու համար: Բացառող ընտրանքով հարցումը իրականացվել է նույն պատահական ընտրանքի մեթոդով՝ մի տարբերությամբ. հարցազրուցավարները պետք է բաց թողնեին այն տնային տնտեսությունները, որոնք 2005-2007 թթ. աշխատանքային միգրացիայում ներգրավված չեն եղել: Ընտրանքի առաջնային միավորները երկու փուլերում եղել են նույնը, ինչ 2005 թ.-ին:

Հիմնական հարցման ընտրանքի մեթոդաբանությունը. բազմաստիճան ինքնակշռված պատահական ընտրանք: Բոլոր համամասնությունները հիմնված են 2001 թ. մարդահամարի տվյալների վրա:

Ընտրանքային համախմբությունը. 1500 տնային տնտեսություն

Գլխավոր համախմբությունը. ՀՀ տնային տնտեսությունների ընդհանուր թիվը՝ 778,667, համաձայն 2001 թ. մարդահամարի տվյալների

Սահմանային սխալը. 2.6%՝ 95% վստահության մակարդակի դեպքում

Հարցման գործիքը. Ընտրանքում ընդգրկված տնային տնտեսության գլխավորի կամ նրա ամենամոտ ազգականի հետ ստանդարտացված հարցազրույց անցկացնելու համար օգտագործվել է 2005 թ.-ի հարցման հարցաթերթի կատարելագործված տարբերակը: Հնարավորության դեպքում աշխատանքային միգրացիայի գործընթացին առընչվող հարցերը տրվել են միգրանտին:

2005 թ.-ին օգտագործված հարցաթերթը ենթարկվել է որոշ փոփոխությունների՝ ելնելով հետևյալ նկատառումներից. ա) հաշվի առնելով առաջին հարցման արդյունքները, հարցաթերթից հանվել են այն հարցերը, որոնք չէին օգտագործվել հարցման արդյունքների վերլուծության ժամանակ, որոշ հարցեր վերաձևակերպվել են՝ ավելի համապատասխանեցնելով դրանք հետազոտության նպատակներին, հարցվողների վերաբերմունքին առընչվող

որոշ հարցեր հանվել են, քանի որ երկու տարվա ընթացքում հասարակական կարծիքը դժվար թե էապես փոխվեր, և բ) հայացք դեպի ապագան՝ նախանշվել են պոտենցիալ հետաքրքրություն ներկայացնող ոլորտները, ավելի շատ հարցեր են ընդգրկվել աշխատանքային միզրացիայի գործընթացի որոշակի կողմերի վերաբերյալ:

Որոշ նկատառումներ տվյալների վերլուծության վերաբերյալ. Ինչպես և 2005 թ.-ին, այս անգամ ևս միզրացիայի տեմպի, միզրանտների և տնային տնտեսությունների սոցիալ-ժողովրդագրական նկարագրի վերաբերյալ գնահատականները, ինչպես նաև 2007 թ.-ի համար միզրացիոն տեմպերի կանխատեսումները հիմնված են 1500 տնային տնտեսություններից բաղկացած հիմնական ներկայացուցչական ընտրանքի վրա: Վերլուծության այս ասպեկտները ներկայացված են սույն հաշվետվության 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ գլուխներում: Վերլուծության մնացած մասը, որն անդրադառնում է միզրանտների ուղևորություններին, հիմնված է աշխատանքային միզրացիայում ներգրավված 450 տնային տնտեսություններ ընդգրկող ընտրանքի վրա: Քանի որ բացառող ընտրանքով հարցումն իրականացվել է այն մարզերում և համայնքներում, որտեղ միզրացիայի տեմպը ամենաբարձրն է, ուստի ընտրանքի ծավալն ընտրանքի միավորների միջև համամասնորեն բաշխված չէր: Այդ իսկ պատճառով մենք օգտագործել ենք յուրաքանչյուր շրջանի քաղաքային և գյուղական բնակչության թվաքանակի վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները՝ դրանք կշռելու և իրական հարաբերակցությունը արտացոլելու նպատակով:

Խորին հարցազրույցներ աշխատանքային միզրանտների հետ

2007 թ. մայիսին մենք խորին հարցազրույցներ ենք անցկացրել 100 աշխատանքային միզրանտների հետ, ովքեր 2002-2006 թթ. ընկած ժամանակահատվածում ժամանակավորապես աշխատել են արտերկրում: Հարցվողներից ոմանց հետ խորին հարցազրույցի վերաբերյալ պայմանավորվածություն էր ձեռք բերվել դեռևս քանակական հարցման ընթացքում: Մյուսներին հարցազրույցավարները ծանոթացել են տեղում, քանի որ միզրանտներից շատերը, ովքեր նախապես համաձայնել էին մասնակցել խորին հարցազրույցին, մինչ այդ արդեն մեկնել էին արտագնա աշխատանքի:

Խորին հարցազրույցի հարցերի շրջանակը մշակվել է, հիմք ընդունելով հետաքրքրված միջազգային կազմակերպությունների և պետական մարմինների ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքները: Հարցազրույցներն օգնեցին բացահայտել միզրանտների ընկալումները, զգացմունքները և ունեցած փորձը և հարուստ նյութ տվեցին որակական վերլուծության համար:

ԳԼՈՒԽ 1. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԻՎԸ

Հարցման հիմնական ընտրանքում ընդգրկել է 1,500 տնային տնտեսություն, որոնց անդամների ընդհանուր թիվը կազմել է 6,927: Աղյուսակ 1-1 ներկայացնում է տնային տնտեսությունների բաշխումը՝ ըստ անդամների թվի, ինչպես նաև համեմատությունը 2005 թ. հարցման արդյունքների և 2001 թ. մարդահամարի տվյալների հետ:


Աղյուսակ 0-1 Տնային տնտեսության անդամների թիվը

S/տ անդամների թիվը	2007 թ. հարցում (%)	2005 թ. հարցում (%)	2001 թ. մարդահամար (%)
1	4.7	5.7	11.0
2	10.5	11.0	12.8
3-4	32.7	32.6	35.2
5-6	38.3	36.6	30.5
7 և ավելի	13.8	14.1	10.5
Ընդամենը	100.0	100.0	100.0
Միջին	4.6	4.6	4.1

Ինչպես երևում է աղյուսակից, 2007 թ. և 2005 թ. տվյալները գրեթե նույնն են: Պաշտոնական վիճակագրության և մեր տվյալների միջինների 0.5 տարբերությունը կարող է պայմանավորված լինել մի քանի պատճառներով, որոնցից ամենահավանականն այն է, որ մեկ հոգուց բաղկացած ընտանիքները բավարար կերպով ներկայացված չեն ընտրանքում, քանի որ հարցվողին տանը հանդիպելու հավանականությունը համեմատաբար փոքր էր:

ՄԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Ինչպես 2005 թ.-ին, այս անգամ ևս տնային տնտեսությունների սեռատարիքային կազմի վերաբերյալ ստացված տվյալները գրեթե չեն տարբերվում 2001 թ. մարդահամարի տվյալներից (տես Պատկերներ 1-1 և 1-2 հաջորդ էջում):



Աղյուսակ 1-2-ում ներկայացված է հարցված տնային տնտեսությունների անդամների բաշխումն ըստ սեռի և տարիքի:


Աղյուսակ 1-2. Մեռատարիքային կազմը

Տարիք	Ընդամենը (%)	Տղամարդ (%)	Կին (%)
0-10	13.0	6.9	6.1
11-20	19.6	9.6	10.0
21-30	17.2	8.8	8.4
31-40	11.8	5.4	6.4
41-50	15.3	7.3	8.0
51-60	9.4	4.3	5.1
61-70	6.7	2.9	3.8
71 և բարձր	6.9	2.8	4.2
Ընդամենը	100.0	48.0	52.0

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հարցված տնային տնտեսությունների 11 տարեկանից բարձր տարիքի անդամների մեծամասնությունն ունի միջնակարգ (38.3%) կամ միջին մասնագիտական կրթություն (20.0%): 18.2%-ն ունի բարձրագույն կրթություն, որոնցից 1.9% ունի բակալավրի, իսկ 16.2%` մագիստրոսի կոչում: 0.2%-ն ունի հետբուհական կրթություն: Ընտանիքի անդամների մոտ մեկ քառորդը չի ավարտել (կամ դեռ չի ավարտել) միջնակարգ դպրոցը (տե՛ս Պատկեր 1-3 հաջորդ էջում):

Համաձայն ստացված տվյալների՝ ներկայումս 16-20 տարեկան անձանց 27.7%-ը սովորում է բարձրագույն ուսումնական հաստատություններում, իսկ 5.8%-ը միջին մասնագիտական կրթություն է ստանում: 7-16 տարեկանների մոտ 98%-ը սովորում է միջնակարգ դպրոցում: Մանկապարտեզների հաճախելիության ցուցանիշը մնում է ցածր. 2-6 տարեկան երեխաների միայն 12%-ն է մանկապարտեզ հաճախում:



Հարցված տնային տնտեսություններում տղամարդկանց և կանանց կրթամակարդակի վերաբերյալ տվյալներն արտացոլում են ընդհանուր վիճակագրական համամասնությունները և կրկնում 2005 թ.-ի հարցման տվյալները: Միջին մասնագիտական կրթություն է ստացել տղամարդկանց 19.0%-ը և կանանց 20.9%-ն, և գրեթե հավասար թվով կանայք և տղամարդիկ ստացել են միջնակարգ (38.1% և 38.4% համապատասխանաբար) և բարձրագույն կրթություն (18.4% և 18.1%):


Միաժամանակ, հարցման արդյունքները ցույց են տալիս, որ Երևան քաղաքի և հանրապետության այլ բնակավայրերի (հատկապես՝ գյուղերի) բնակչության կրթամակարդակների միջև տարբերությունն էլ ավելի զգալի է դարձել, քան 2005 թ.-ին:

Աղյուսակ 1-3. Կրթամակարդակն ըստ բնակավայրի

Կրթամակարդակը	Երևան (%)	Այլ քաղաքային բնակավայրեր (%)	Գյուղական բնակավայրեր (%)
Չունի տարրական	0.4	0.7	1.5
Տարրական (3 տարի)	7.3	7.4	10.0
Հիմնական (8 տարի)	6.7	11.1	18.6
Միջնակարգ (10 տարի)	29.9	35.9	43.2
Միջին մասնագիտական	14.2	26.3	17.8
Բարձրագույն	41.5	18.7	8.9
Ընդամենը	100.0	100.0	100.0

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հարցված տնային տնտեսությունների անդամների բաշխումն ըստ մասնագիտությունների բերված է Պատկեր 1-4-ում: Տոկոսները հիմնված են միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ստացած մարդկանց ընդհանուր թվի վրա:



Բնական է, որ հետխորհրդային տարիներին միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ստացած մարդկանց մասնագիտությունները տարբերվում են ավագ սերնդի ներկայացուցիչների ձեռք բերած մասնագիտություններից: Այսպիսով, 20-35 տարիքային խմբում առավել մեծ թիվ են կազմում տարբեր մասնագիտացում ունեցող տնտեսագետները (19.4%) և բժիշկները (13.8%), մինչդեռ ինժեներներն ու մանկավարժները միայն երրորդ տեղում են (յուրաքանչյուրը` 13.1%): Միաժամանակ, 35 տարեկան և բարձր տարիքային խմբի ներկայացուցիչների գրեթե մեկ քառորդն ինժեներ է (22.7%), իսկ 15.1%-ը` մանկավարժ: Տարբեր արհեստներ է սովորել երիտասարդների 8.2% և տարեցների` 13.8%:

Տնտեսական ակտիվությունը և գործազրկությունը

Հարցումը թույլ է տալիս գնահատել, որ Հայաստանի ընդհանուր աշխատանքային ռեսուրսները կազմում են երկրի մշտական բնակչության 63.0-65.4%-ը (կամ 2,024,000-2,101,000 մարդ): Այս թիվը փոքր-ինչ ավելացել է 2005 թ.-ի տվյալների համեմատ (2005 թ.-ի հարցման արդյունքների համաձայն աշխատանքային ռեսուրսները կազմում էին երկրի մշտական բնակչության 61.1-63.5%-ը): Ու թեև տնտեսապես ակտիվ բնակչության թիվը 2005 թ.-ի համեմատ փոքր-ինչ նվազել է, սակայն զգալիորեն բարձրացել է զբաղվածության մակարդակը: Այժմ աշխատանք ունի տնտեսապես ակտիվ բնակչության 75.2%-ը, մինչդեռ 2005 թ.-ին զբաղված էր նրանց միայն 66.7%-ը (տե՛ս Աղյուսակ 1-4):

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍ ասելով պետք է հասկանալ աշխատանքային տարիքի աշխատունակ անձանց, աշխատող թռչակառուներին և աշխատող պատանհիներին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ընդգրկում է 16-62 տարեկան տղամարդկանց և 16-58 տարեկան կանանց:

ՏՆՏԵՍԱԿԵՍ ԱԿՏԻՎ է համարվում բնակչության աշխատող և գործազուրկ զանգվածը, իսկ ՏՆՏԵՍԱԿԵՍ ՈՉ ԱԿՏԻՎ են այն աշխատունակ անձիք, որոնք չեն աշխատում և աշխատանք չեն փնտրում:

ԳՈՐԾԱՉՈՒՐԿ պետք է համարել աշխատանքային տարիքի այն աշխատունակ անձանց, ովքեր չեն աշխատում, սակայն ակտիվորեն աշխատանք են փնտրում և պատրաստ են անմիջապես գործի անցնել:

Աղյուսակ 1-4. Տնտեսական ակտիվություն

Տնտեսական ակտիվություն	2007 (ԱՄՏ)	2005 (ԱՄՏ)	2003 (ԱՎԾ) ¹
Աշխատանքային ռեսուրսներ (ԱՌ)	64.2	62.3	62.5
Տնտեսապես ակտիվ (ՏԱ) բնակչություն (ԱՌ-ի %)	61.6	65.0	61.4
Զբաղված (ՏԱ-ի %)	75.2	66.7	89.9
Գործազուրկ (ՏԱ-ի %)	24.8	33.3	10.1
Գրանցված գործազուրկ (ՏԱ-ի %)	2.7	5.0	10.1
Չգրանցված գործազուրկ (ՏԱ-ի %)	22.1	28.3	-
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն (ԱՌ-ի %)	39.3	35.0	38.6

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2004, Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայություն

Զբաղվածների խմբի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2005 թ.-ի համեմատ զգալիորեն նվազել է ինքնագրավածների թիվը (40.7%-ից 32.8%), իսկ վարձու աշխատողների տոկոսը 57.0%-ից բարձրացել է 65.7%: Միաժամանակ, մասնավոր հատվածում աշխատողների թիվը 20.0%-ից աճել է մինչև 25.7%: Այնուամենայնիվ, կանայք դեռևս ցածր ակտիվություն են ցուցաբերում մասնավոր հատվածում և մեծամասամբ աշխատում են պետական հաստատություններում (տե՛ս Աղյուսակ 1-5):

Աղյուսակ 1-5. Սոցիալ-տնտեսական կարգավիճակը

Կարգավիճակ	Բոլոր զբաղվածները (%)	Աշխատող տղամարդիկ (%)	Աշխատող կանայք (%)
Գործատու	1.5	2.0	0.7
Վարձու աշխատող պետական հատվածում	39.4	35.5	46.4
Վարձու աշխատող մասնավոր հատվածում	25.7	29.6	18.6
Վարձու աշխատող հասարակական հատվածում	0.6	0.6	0.5
Ինքնագրաված (գյուղատնտեսության մեջ)	25.8	23.6	29.7
Ինքնագրաված (այլ ոլորտներում)	7.0	8.7	4.0
Ընդամենը	100.0	100.0	100.0

Զբաղվածության ամենատարածված ոլորտներն են գյուղատնտեսությունը (25.8%), շինարարությունը (12.0%) և կրթությունը (11.2%): Զբաղվածներից յուրաքանչյուր տասներորդը աշխատում է հանրային ծառայություններ մատուցող ընկերություններում (էլեկտրաէներգիա, ջրամատակարարում և այլն) և մոտ 8.6%-ն աշխատում է առևտրի ոլորտում:

Տնտեսական ակտիվության վրա ազդող գործոնները


Թեև երկու հետազոտությունների միջև ընկած ժամանակահատվածը բավականին կարճ էր (երկու տարի), այնուամենայնիվ որոշակի փոփոխություններ են գրանցվել բնակչության տարբեր խմբերի տնտեսական ակտիվության ցուցանիշներում: Նախորդ հետազոտության արդյունքներում անհանգստացնող էր կանանց փոքր ակտիվությունը աշխատանքային շուկայում, որը սակայն վերջին երկու տարիների ընթացքում փոքր-ինչ աճել է: Կանանց բաժինը տնտեսապես ակտիվ բնակչության թվում այժմ կազմում է 38%՝ 2005 թ.-ի 36%-ի փոխարեն, իսկ նրանց գործազրկության մակարդակը 40.9%-ից նվազել է մինչև 31.6% (տղամարդկանց դեպքում գործազրկության մակարդակը կրճատվել է 7.7%-ով):

Աղյուսակ 1-6. Մեռը, տարիքը և տնտեսական ակտիվությունը (աշխատանքային տարիքի բնակչություն)

Տարիքը	Ընդամենը (%)		Տղամարդիկ (%)		Կանայք (%)	
	Ակտիվ	Չբաղված	Ակտիվ	Չբաղված	Ակտիվ	Չբաղված
16-20	25.4	64.0	37.8	74.8	13.5	35.2
21-25	54.5	66.5	69.7	69.6	38.2	60.3
26-30	64.4	72.1	84.8	77.9	44.4	61.2
31-35	64.3	74.1	87.8	75.8	43.7	71.3
36-40	71.3	77.6	89.4	79.4	56.8	75.4
41-45	76.5	77.2	96.0	80.7	59.8	72.3
46-50	76.7	79.7	92.0	83.8	62.1	74.0
51-55	78.0	80.7	92.0	83.9	65.8	76.9
56-60	69.8	74.7	82.9	79.4	52.2	64.6
61-65	75.0	66.7	75.0	66.7	0.0	0.0
Ընդամենը	60.9	74.4	77.1	78.1	45.2	68.4

Ինչպես երևում է աղյուսակից, տնտեսական ակտիվության ամենացածր ցուցանիշները գրանցվել են 16-25 տարիքային խմբում: Սա մասամբ կարող է բացատրվել այն փաստով, որ միջնակարգ դպրոցների շրջանավարտների մոտ մեկ երրորդը ընդունվում է միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններ և ուսման ընթացքում չի աշխատում: Մյուս կողմից, գործազրկության բարձր մակարդակը նորավարտ մասնագետների, ինչպես նաև այն երիտասարդների շրջանում, ովքեր նախընտրում են աշխատանք գտնել ուսումը շարունակելու փոխարեն, հիմնականում պայմանավորված է աշխատանքային շուկայում առկա բարձր մրցակցությամբ: Աշխատուժի ավելցուկի պայմաններում գործատուները նախընտրում են աշխատանքի վերցնել նրանց, ովքեր ավելի մեծ աշխատանքային փորձ ունեն:

2007 թ.-ի հարցման արդյունքները ևս մեկ անգամ արձանագրեցին կրթամակարդակի և տնտեսական ակտիվության միջև դրական կապը: Ավելին, բարձրագույն կրթությամբ տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում գործազուրկների թիվն այժմ կազմում է 15.9%՝ 2005 թ.-ի 26.7%-ի փոխարեն: Միաժամանակ, միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն ունցողների 30%-ը դեռևս չի կարողանում աշխատանք գտնել: Ընդհանուր առմամբ նրանք կազմում են գործազուրկ բնակչության 75%-ը:



Տարբեր մասնագիտություններ ունեցող մարդկանց տնտեսական ակտիվությունը համեմատելիս պարզվեց, որ արհեստագործները և ինժեներներն ամենաբարձր տնտեսական ակտիվությունն են ցուցաբերում, ինչը բնական է, քանի որ նրանց գրեթե 3/4-ը 35 տարեկանից բարձր տարիքի է: Այնուամենայնիվ, գործազուրկ է յուրաքանչյուր երրորդ տնտեսապես ակտիվ արհեստագործը և յուրաքանչյուր հինգերորդ ինժեները:


Արվեստի և մշակույթի բնագավառի մասնագետները ամենաշատն են դժվարանում աշխատանք գտնել. այս մասնագետների գործազրկության մակարդակը հասնում է 35%-ի:

Աղյուսակ 1-7. Մասնագիտությունը և տնտեսական ակտիվությունը

Մասնագիտությունը	Ակտիվ (%)	Զբաղված (%)	Գործազուրկ (%)
Արհեստներ	77.4	70.3	29.7
Ճարտարագիտություն	73.5	79.2	20.8
Բնական գիտություններ	67.9	77.5	22.5
Մանկավարժություն	65.9	87.2	12.8
Սոցիալական գիտություններ	65.2	88.0	12.0
Արվեստ և մշակույթ	65.2	65.0	35.0
Գյուղատնտեսություն	63.0	74.2	25.8
Լեզվաբանություն	62.7	90.5	9.5
Տնտեսագիտություն	60.2	70.3	29.7
Բժշկություն	54.1	73.7	26.3

Զբաղված, գործազուրկ և տնտեսապես ոչ ակտիվ սեզմենտների ընդհանուր համամասնությունը քաղաքային և գյուղական համայնքներում գրեթե չի փոխվել 2005 թ.-ի տվյալների համեմատ: Տնտեսական ակտիվությունը շարունակում է ավելի բարձր մնալ քաղաքային բնակավայրերում, իսկ գործազրկության մակարդակը դարձյալ ամենացածրն է գյուղական համայնքներում: Միևնույն ժամանակ, ողջ երկրում արձանագրված գործազրկության կրճատման համատեքստում, գործազրկության մակարդակը Երևանում 30.3%-ից կրճատվել է մինչև 24.9% և գյուղական համայնքներում՝ 27.7%-ից մինչև 16.9%:

Այսուհանդերձ, հետազոտությունը ցույց է տալիս, որ զբաղվածության հարցում արձանագրված դրական տեղաշարժը գրեթե ազդեցություն չի ունեցել մարզերի քաղաքների վրա, որտեղ տնտեսապես ակտիվ բնակչության ավելի քան 37%-ը գործազուրկ է:



Համեմատելով տնտեսական ակտիվության վերաբերյալ տվյալները ողջ երկրի 60.9% միջին տնտեսական ակտիվության հետ, կարող ենք ասել, որ բարձր տնտեսական ակտիվություն է գրանցվել Երևանում, Շիրակի, Արմավիրի, Լոռու և Տավուշի մարզերում (65-73%), միջին՝ Վայոց Ձորում, Արագածոտնի և Արարատի մարզերում (59-62%), և ցածր տնտեսական ակտիվություն՝ Սյունիքում, Կոտայքում և Գեղարքունիքում (42-57%):

Միևնույն ժամանակ, Արարատի, Կոտայքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերում գրանցվել է զբաղվածության ամենաբարձր մակարդակը (տնտեսապես ակտիվ բնակչության ավելի քան 80%-ն աշխատանք ունի), մինչդեռ Լոռիում, Սյունիքում և Շիրակում զբաղվածության մակարդակը չի գերազանցում 60%-ը:

Աղյուսակ 1-8. Տնտեսական ակտիվությունը և բնակավայրը

Մարզ	Տնտեսապես ակտիվ		Չբաղված	
	Տոկոս	Դիրքն ըստ ակտիվության	Տոկոս	Դիրքն ըստ զբաղվածության
Երևան	66.8	3	75.1	5
Արագածոտն	61.0	6	80.6	4
Արարատ	58.9	7	84.8	1
Արմավիր	67.3	2	84.0	3
Գեղարքունիք	41.8	10	72.7	6
Լոռի	65.2	4	58.5	10
Կոտայք	43.7	9	84.4	2
Շիրակ	73.4	1	60.6	9
Սյունիք	57.0	8	60.6	9
Վայոց Ձոր	62.9	5	69.7	7
Տավուշ	65.2	4	63.8	8
Ընդամենը	60.9		74.4	

Վիճակագրական տվյալներ գործազրկության վերաբերյալ

Սույն հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի՝ տնտեսապես ակտիվ 291,000-336,000 բնակիչներ գործազուրկ են: Նրանց կեսից ավելին տղամարդիկ են և մոտ 28%-ը 26 տարեկանից երիտասարդ է: Աղյուսակ 1-9-ում ներկայացված է գործազուրկ բնակչության բաշխումն ըստ սեռատարիքային խմբերի (բոլոր թվերը հիմնված են գործազրկության գնահատված միջակայքի ստորին շեմի վրա):

Աղյուսակ 1-9. Գործազուրկ բնակչության բաշխումն ըստ սեռի և տարիքի


Տարիք	Ընդամենը		Տղամարդիկ		Կանայք	
	Տոկոս	Բացարձակ թիվ	Տոկոս	Բացարձակ թիվ	Տոկոս	Բացարձակ թիվ
16-20	10.4	30,400	5.3	15,400	5.1	15,000
21-25	17.6	51,300	10.6	30,800	7.1	20,500
26-30	13.7	39,800	7.1	20,500	6.6	19,300
31-35	9.9	28,700	5.9	17,100	4.0	11,600
36-40	9.4	27,300	4.9	14,000	4.6	13,300
41-45	12.6	36,800	6.2	18,000	6.5	18,800
46-50	12.2	35,500	5.7	16,700	6.5	18,800

Տարիք	Ընդամենը		Տղամարդիկ		Կանայք	
	Տոկոս	Բացարձակ թիվ	Տոկոս	Բացարձակ թիվ	Տոկոս	Բացարձակ թիվ
51-55	7.6	22,300	3.5	10,300	4.1	12,000
56-60	5.6	16,300	3.1	9,000	2.5	7,300
61-65	0.9	2,600	0.9	2,600	0	0
Ընդամենը	100.0	291,000	53.1	154,400	46.9	136,600

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏԸ


Միջին ամսական եկամուտ

Հարցվողների գնահատականների համաձայն՝ Հայաստանում ընտանիքների կեսից ավելին (52.3%) ստանում է ամսական 50,000 դրամից պակաս եկամուտ: Տնային տնտեսությունների մոտ մեկ հինգերորդի ամսական եկամուտը կազմում է 50,000-100,000 դրամ և 18.5%-ն ամսական վաստակում է 100,000 դրամից ավելի: Հարցվողների պատասխանների հիման վրա հաշվարկված՝ տնային տնտեսությունների միջին ամսական եկամուտը կազմում է 71,000 դրամ, իսկ մեկ շնչին բաժին ընկնող միջին ամսական եկամուտը կազմում է 18,000 դրամ:



Տնային տնտեսության կենսամակարդակը հարցվողների գնահատմամբ

Հաշվի առնելով հարցվողների հակվածությունը՝ թաքցնել տնային տնտեսության եկամտի իրական չափը, մենք փորձել ենք պարզել նաև հարցվողների սուբյեկտիվ պատկերացումներն իրենց կենսամակարդակի վերաբերյալ: Հարցվողներին խնդրել էինք գնահատել ընտանիքի կենսամակարդակը՝ համեմատելով այն իրենց համայնքի և ընդհանուր առմամբ ՀՀ բնակչության կենսամակարդակի հետ: Պատկերներ 1-8 և 1-9-ը ամփոփում են այս երկու հարցերին տրված պատասխանները:



Ինչպես երևում է պատկերներից, հարցվողների մեծամասնությունը գտնում է, որ իրենց կենսամակարդակը մոտ է իրենց համայնքի բնակչության ընդհանուր կենսամակարդակին: Սակայն, հարցվողների գրեթե կեսը (49.2%) համոզված է, որ իրենց կենսամակարդակը երկրի ընդհանուր միջինից զատ է:

Որքան էլ հարցվողները նվազեցրած լինեն իրենց իրական եկամուտը, հետաքրքիր էր այն համեմատել կենսամակարդակի նրանց ընկալումների հետ: Պարզվեց, որ հարցվողները բարձր կենսամակարդակ են համարում ամսական 266,000 դրամ եկամուտը, և, որ երկրի միջին կենսամակարդակը, հարցվողների գնահատմամբ, ամսական 87,000 դրամ եկամուտն է:

Աղյուսակ 1-10 Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը ի համեմատ հարցվողների նշած ամսական եկամուտի

Գնահատված կենսամակարդակ	Ընդհանուր ամսական եկամուտ (միջին)	Մեկ շնչին բաժին ընկնող եկամուտ (միջին)
Բարձր	266,000	52,000
Միջինից բարձր	187,000	49,000
Միջին	87,000	21,000
Միջինից ցածր	60,000	15,000
Ցածր	34,000	9,000

Տնային տնտեսության եկամուտի աղբյուրները

Ինչպես և 2005 թ.-ին, այս անգամ ևս հարցվողների մեծամասնությունը պատասխանել է, որ իրենց տնային տնտեսության եկամուտի հիմնական աղբյուրը աշխատավարձն է (48.1%) կամ կենսաթոշակը (19.8%): Տնային տնտեսությունների 13.2%-ի համար եկամուտի հիմնական աղբյուր է մասնավոր ձեռնարկատիրությունը (գյուղատնտեսական կամ այլ):


Որպես եկամուտի լրացուցիչ աղբյուր, դարձյալ ամենահաճախը նշվել են կենսաթոշակն ու նպաստը (35.7%): Հարցվողների մեկ երրորդի համար լրացուցիչ եկամուտի աղբյուր է տնամերձ հողատարածքի մշակումից ստացված բերքը (33.2%):

Տնային տնտեսությունների 6.2%-ի համար եկամուտի հիմնական աղբյուր է արտերկրում մշտապես կամ ժամանակավոր բնակվող հարազատներից ստացվող ֆինանսական աջակցությունը (նշենք, որ 2005 թ.-ին արտերկրից դրամական փոխանցումները եկամուտի հիմնական աղբյուր էին տնային տնտեսությունների 4.5%-ի համար): Հարցվողների 7.3%-ի համար դրամական փոխանցումները եկամուտի լրացուցիչ աղբյուր են: Այսպիսով, արտերկրից ֆինանսական աջակցություն ստացող տնային տնտեսությունների ընդհանուր թիվը կազմում է 11.8%: Եթե տարածենք սա տնային տնտեսությունների ընդհանուր թվի վրա, 1.7% հաշվարկված սահմանային սխալով, ապա կստացվի, որ 2007 թ.-ի սկզբին 79,000-105,000 տնային տնտեսություններ դրամական փոխանցումներ էին ստանում արտերկրից:

ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

Հարցման արդյունքների համաձայն՝ 2005-2007 թթ. ընկած ժամանակահատվածում աշխատանքային միգրացիայի գործընթացում ներգրավված է եղել հարցված ընտանիքների 14.5%-ը: Եթե այս տվյալը տարածենք տնային տնտեսությունների ընդհանուր թվի՝ 778,667-ի վրա (95% վստահության մակարդակով և 1.8% հաշվարկված սահմանային սխալով), կարող ենք գնահատել դիտարկվող ժամանակահատվածում միգրացիոն գործընթացում ներգրավված ընտանիքների ընդհանուր թիվը՝ 99,000-127,000 (կամ տնային տնտեսությունների ընդհանուր թվի 12.7-16.3%-ը): Այս ցուցանիշները նախորդ հետազոտության տվյալների հետ



համեմատելիս, առաջին հայացքից կարելի է կարծել, թե միգրացիայի տեմպն արագացել է. նախորդ հարցման համաձայն, 2002-2004 թթ.-ի ընթացքում տնային տնտեսությունների մոտ 14%-ն է ներգրավված եղել աշխատանքային միգրացիայի գործընթացում: Սակայն երկու հետազոտությունների արդյունքների ավելի մանրակրկիտ դիտարկումը ցույց է տալիս, որ աճն իրականում շատ փոքր է եղել. աշխատանքային միգրացիայի գործընթացում ներգրավված տնային տնտեսությունների տոկոսը յուրաքանչյուր տարի տատանվել է 8-9% սահմանում և միջին տարեկան աճը չի գերազանցել 0.5%-ը: Եթե այս թվերը դիտարկենք վիճակագրության տեսանկյունից, հաշվի առնելով նաև սահմանային սխալը, ապա թվերի նման փոքր փոփոխությունը կարող է նշանակել նաև, որ աճ ընդհանրապես չի եղել:


Ինչպես և 2005 թ.-ին, այս անգամ ևս դեպքերի ճնշող մեծամասնությունում (80.6%) ընտանիքի միայն մեկ անդամն է մեկնել արտասահման աշխատելու: Ընտանիքների 15.5%-ն ունեցել է երկու աշխատանքային միգրանտ և ընտանիքների միայն 1.8%-ն է ունեցել երեք միգրանտ:

Ինչ վերաբերում է աշխատանքային միգրացիայի իրական տեմպին (աշխատանքային միգրացիայում ներգրավված բնակչության տոկոսը), ապա 2007 թ.-ի հետազոտության տվյալների համաձայն, հարցման հիմնական ընտրանքում ընդգրկված տնային տնտեսությունների անդամների 3.4%-ն է

2005-2006 թթ.-ին ներգրավված եղել աշխատանքային միգրացիայի գործընթացում: Այս տվյալը թույլ է տալիս նոտարկել աշխատանքային միգրանտների բացարձակ թիվը՝ 96,000–122,000 մարդ, կամ Հայաստանի մշտական բնակչության 3.0-3.8%-ը (հաշվարկված սահմանային սխալը կազմել է 0.4%):

2005 թ.-ի հունվար ամսից մինչև 2006 թ.-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում, միգրանտների մեծամասնությունը (51.6%) կատարել է երկու կամ երեք աշխատանքային ուղևորություն (40.1% և 11.5% համապատասխանաբար): Փոփոխված հարցաթերթը թույլ տվեց ավելի ճշգրիտ գնահատել նաև տարեկան միգրացիոն ցուցանիշները 2005-ի և 2006-ի համար: Ստացված տվյալների համաձայն, արտերկրում աշխատելու նպատակով 2005 թ.-ին Հայաստանից մեկնել է 54,000-74,000 միգրանտ, իսկ 2006 թ.-ին՝ 60,000-81,000 միգրանտ: Ընդ որում, միգրանտների շուրջ 70%-ը մինչև 2006 թ.-ի ավարտը վերադարձել է Հայաստան, և աշխատանքային միգրացիայի բացասական սալոնո կազմել է 29,000-35,000:

Սեկ այլ բացահայտում էր այն, որ 2005-2006 թթ.-ի ընթացքում աշխատանքային միգրացիոն հոսքում մեծամասնություն են կազմել այն միգրանտները, ովքեր արտերկրում աշխատել են նաև մինչև դիտարկվող ժամանակահատվածը: Միաժամանակ, 2005 թ.-ից առաջ աշխատանքային միգրացիային մասնակցողների մեծամասնությունը դադարել է արտերկրում աշխատանք փնտրել (տե՛ս Պատկերներ 2-2 և 2-3):



ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

2007 թ.-ի հարցումը երկու կարևոր տարբերություն գրանցեց 2002-2004 թթ. և 2005-2006 թթ. միգրացիոն հոսքերի միջև. ա) աշխատանքային միգրացիայում գյուղական բնակչության ներգրավվածության աճ և բ) երևանաբնակ աշխատանքային միգրանտների թվի էական կրճատում: Եթե 2002-2004 թթ. քաղաքային բնակավայրերից միգրացիայի տեմպը գրեթե կրկնակի գերազանցում էր գյուղական բնակչության միգրացիոն ակտիվությունը (5.4% և 2.8% համապատասխանաբար), ապա 2007 թ.-ի տվյալների համաձայն, քաղաքային և գյուղական բնակչության միգրացիոն ակտիվությունը գրեթե հավասար է: Ավելին, այժմ աշխատանքային միգրացիայի գործընթացում տնային տնտեսությունների ներգրավվածության տոկոսն ավելի բարձր է գյուղական բնակավայրերում:

Միաժամանակ, քաղաքային բնակչության միգրացիոն ակտիվությունը կրճատվել է ի հաշիվ Երևանից մեկնող միգրանտների թվի կրճատման: Միգրացիոն գործընթացում ներգրավված տնային տնտեսությունների տոկոսը մայրաքաղաքում 10.5%-ից նվազել է մինչև 7.3%, իսկ միգրացիայի տեմպը կրճատվել է գրեթե երկու անգամ (2.4%՝ 2005-2006 թթ.-ին և 4.2%՝ 2002-2004 թթ.): Աղյուսակ 2-1-ում ներկայացված են 2005 և 2007 թթ. հետազոտությունների տվյալները:

Աղյուսակ 2-1. Քաղաքային և գյուղական բնակչության միգրացիոն ակտիվությունը

Բնակավայրի տիպը	Ներգրավված տնային տնտեսություններ (%)				Միգրացիայի տեմպը (%)			
	2005-2006		2002-2004		2005-2006		2002-2004	
Երևան	7.3	12.3	10.5	15.2	2.4	3.6	4.2	5.4
Այլ քաղաքային բնակավայրեր	18.1		17.9		4.9		6.1	
Գյուղական բնակավայրեր	15.0	15.0	12.1	12.1	3.5	3.5	2.8	2.8

Մեր կարծիքով վերոնշյալ փոփոխությունները կարելի է բացատրել Հայաստանի աշխատանքային շուկայի դինամիկայով, որը նկարագրված է Գլուխ 1-ում: Գործազրկության ընդհանուր մակարդակը կրճատվել է, ընդ որում այս կրճատումը հիմնականում նկատելի է Երևանում և գյուղական բնակավայրերում: Միաժամանակ գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը զբաղված է փոքրածավալ ֆերմերային գործունեությամբ, ինչը սեզոնային աշխատանք է և չի կարող կայուն և բավականաչափ բարձր եկամուտ ապահովել: Այլ կերպ ասած, ստացված եկամուտը բավարար չէ նորմալ կենսապայմաններ ապահովելու համար, սակայն կարող է բավարարել արտերկիր մեկնելու ճանապարհաձևախառն հոգալու համար՝

այնտեղ աշխատանք գտնելու նպատակով: Պատկերը բոլորովին այլ է Երևանում: Այստեղ զբաղվածությունը հիմնականում նշանակում է կայուն աշխատանք, որը շատ քչերը կգոհաբերեին՝ օտար երկրում իրենց բախտը փորձելու համար: Աշխատանքային շուկայի վերջին զարգացումների համատեքստում, Հայաստանի մարզերի քաղաքային բնակչությունը շարունակում է մնալ ամենաանապահովը՝ ունենալով գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավվելու շատ սահմանափակ հնարավորություն և շատ թույլ զարգացած մասնավոր հատված: Աշխատատեղերի սակավությունը և ընկերների հաջող միգրացիոն փորձը կարող են իսկապես բավարար հիմք հանդիսանալ միգրացիան՝ ծանր ֆինանսական կացությունից դուրս գալու միակ ելք դիտարկելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես և 2002-2004 թթ., 2005-2007 թթ. և միգրացիայի ամենաբարձր տեմպը գրանցվել է Շիրակի և Լոռու մարզերում: Աղյուսակ 2-2-ում ամփոփված են Հայաստանի բոլոր մարզերից միգրացիայի տեմպերի վերաբերյալ տվյալները:

Աղյուսակ 2-2. Աշխատանքային միգրացիայի տեմպը և միգրանտների բացարձակ թիվը


Մարզ	Միգրացիայի տեմպը (%)		Միգրանտների բացարձակ թիվը	
	Գրանցված	Առավելագույն	Գրանցված	Առավելագույն
Երևան	2.4	3.0	26,500	33,300
Արագածոտն	4.7	6.9	6,500	9,500
Արարատ	3.3	4.6	9,000	12,600
Արմավիր	2.9	4.2	8,000	11,500
Գեղարքունիք	2.9	4.3	6,900	10,200
Լոռի	5.7	7.5	16,300	21,500
Կոտայք	3.0	4.3	8,200	11,600
Շիրակ	8.8	10.9	25,000	31,000
Սյունիք	1.2	2.3	1,800	3,500
Վայոց Ձոր	5.7	9.4	3,200	5,300
Տավուշ	2.1	8.3	7,700	11,100
Ընդամենը	3.6	4.0	115,700	129,200

Մեր տվյալների համաձայն՝ 2005-2007 թթ.-ին արտերկրում աշխատող հայ աշխատանքային միգրանտների կեսից ավելին եղել են Երևանից, Շիրակի և Լոռու մարզերից (56.4% գումարային):

ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՄԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Հարցման արդյունքների համաձայն, կին միգրանտների թիվը զգալիորեն կրճատվել է: 2002-2004 թթ. կանայք կազմում էին աշխատանքային միգրանտների 14.1%-ը, մինչդեռ 2005-2006 թթ. կին միգրանտների թիվը կրճատվել է մինչև 6.5%: Այս փոփոխությունն ամենայն հավանականությամբ պայմանավորված է Հայաստանում կանանց զբաղվածության մակարդակի զգալի աճով:



Ստացած տվյալների տարածումը բնակչության ընդհանուր թվի վրա թույլ է տալիս գնահատել կին և տղամարդ միգրանտների բացարձակ թիվը՝ 96,000-121,000 տղամարդ և 6,000-8,000 կին: Սա նշանակում է, որ աշխատանքային միգրանտ է տնտեսապես ակտիվ տղամարդկանց առնվազն 13.1%-ը և տնտեսապես ակտիվ կանանց՝ առավելագույնը 1.7%-ը: Քանի որ կին միգրանտների բացարձակ թիվը շատ փոքր է, հարցման այլ տվյալների համեմատությունն ըստ միգրանտների սեռի անիմաստ է:

Միգրանտների տարիքի հետ կապված միգրացիոն առանձնահատկությունները հիմնականում չեն փոխվել: Միակ էական տարբերությունը 21-25 տարիքային խմբում գրանցված միգրացիոն ակտիվության աճն է: Արդյունքում, 2005-2006 թթ. ընթացքում արտերկիր մեկնած աշխատանքային միգրանտների մոտ կեսը պատկանում է 21-40 տարիքային խմբին, իսկ մյուս կեսն էլ՝ 41-60 տարիքային խմբին:

Աղյուսակ 3-1. Միգրացիայի տեմպն ըստ միգրանտների տարիքի

Տարիք	Միգրացիայի տեմպը (%)	Միգրանտների տոկոսը
16-20	0.3	0.8
21-25	7.6	19.2
26-30	6.1	12.3
31-35	6.4	10.0
36-40	4.9	7.7

Տարիք	Միգրացիայի տեմպը (%)	Միգրանտների տոկոսը
41-45	8.5	16.5
46-50	8.1	17.2
51-55	6.9	9.6
56-60	5.2	5.7
61-65	2.0	1.1
Ընդամենը (16-65 տարեկան)	5.6	100.0


ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆ ՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Միգրանտների մեծամասնությունն ամուսնացած էր (76.2%), 21.1%-ն՝ ամուսնացած չէր, 1.1%-ը՝ ամուսնալուծված, իսկ 1.5%-ը՝ այրի: Եվ դարձյալ դեպքերի մեծամասնությունում միգրանտը կամ ընտանիքի գլխավորն էր (տղամարդ), կամ նրա որդին:

Աղյուսակ 3-2. Միգրանտի կապը տնային տնտեսության գլխավորի հետ

Կապը	Տոկոս
Գլխավորի որդին	44.8
Տ/տ գլխավորը (տղամարդ)	42.1
Թուրը	4.6
Դուստրը	3.1
Տ/տ գլխավորը (կին)	0.8
Տ/տ գլխավորի կինը	0.8
Այլ տղամարդ ազգական	1.9
Այլ կին ազգական	1.9
Ընդամենը	100.0

Միգրանտների բաշխումն ըստ կրթամակարդակի գրեթե կրկնում է 2005 թ.-ի տվյալները: 2005-2006 թթ. արտերկիր մեկնած միգրանտների 75%-ից ավելին ուներ միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն (43.3 և 33.0% համապատասխանաբար), և մոտ 20%-ն ուներ բարձրագույն կրթություն:



Հարցման արդյունքների համաձայն, 2005-2006 թթ. ընթացքում ՀՀ յուրաքանչյուր տասներորդ տնտեսապես ակտիվ բնակիչ, որն ուներ միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն, աշխատել է արտերկրում: Բարձրագույն կրթություն ունեցողների միգրացիոն ակտիվությունը մոտ 1.7 անգամ ցածր է եղել:

Աղյուսակ 3-3. Միգրացիոն ակտիվությունն ըստ միգրանտների կրթամակարդակի

Կրթություն	Միգրացիայի տեմպը (%)
Միջնակարգ	11.0
Միջին մասնագիտական	11.4
Բարձրագույն	6.9

Այս արդյունքները կանխատեսելի էին, քանի որ Հայաստանում քիչ են աշխատատեղերը միջին կամ միջին մասնագիտական կրթությամբ մարդկանց համար:

Ինչպես արդեն նշեցինք, մասնագիտական կրթություն ունի միգրանտների 52.9%: Մնացած 47.1%-ը ֆորմալ առումով մասնագիտություն չունեն, սակայն մասնագիտական կրթության դիպլոմ կամ վկայական չունենալով, կարող էին կյանքի ընթացքում որևէ արհեստ սովորած լինել:


Միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունեցող միգրանտների մեծամասնությունն արհեստագործներ կամ ինժեներներ են (30.3% և 29.4% համապատասխանաբար): Երրորդ տեղում տնտեսագետների խումբն է (11.8%): Այս դասակարգումն արտացոլում է երկրի բնակչության ընդհանուր բաշխումն ըստ մասնագիտությունների և տարբեր

մասնագիտական խմբերի զբաղվածության մակարդակը: Ինչպես արդեն նշել ենք Գլուխ 1-ում, աշխատուժի հայկական շուկայում առկա է արհեստագործների, ինժեներների և տնտեսագետների մեծ ավելցուկ: Եթե հաշվի առնենք նաև արտերկրում որակյալ աշխատուժի նկատմամբ մեծ պահանջարկը (հատկապես Ռուսաստանում՝ շինարարության ոլորտում), ապա պարզ կդառնա, թե ինչու է միգրացիոն ակտիվությունը բարձր մասնագետների այս խմբերում:

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Աշխատանքային միգրանտների 41.4%-ը մինչև 2005 թ. աշխատել է Հայաստանում, իսկ գործազուրկների մեծամասնությունը չի աշխատել կամ Հայաստանում իրենց մասնագիտությանը համապատասխանող աշխատանք չգտնելու (59.0%) կամ էլ շատ ցածր աշխատավարձի պատճառով (17.4%): Աշխատանք ունեցող միգրանտների կեսից ավելին հիմնական աշխատանք է ունեցել, մինչդեռ մյուսներն ունեցել են սեզոնային կամ պատահական (մեկնագամյա) աշխատանք:

Հայաստանում աշխատանք ունեցած միգրանտների ամենամեծ խումբը (մոտ մեկ երրորդը) աշխատել է շինարարության ոլորտում: Հիշենք, որ



2005 թ.-ի հարցման արդյունքներով 2002-2004 թթ. արտերկիր մեկնած և մինչ այդ Հայաստանում աշխատանք ունեցած միգրանտների մեծամասնությունն աշխատել էր ծառայությունների ոլորտում, իսկ շինարարությունը երկրորդ տեղում էր: Սա կարող է բացատրվել վերջին տարիներին Հայաստանում շինարարության ծավալների և այդ ոլորտում աշխատուժի պահանջարկի զգալի աճով:


Այդուսակ 3-4-ում թվարկված են հիմնական ոլորտները, որոնցում աշխատել են միգրանտները մինչև 2005 թ. և մինչև 2002 թ. (տե՛ս հաջորդ էջը):

Աղյուսակ 3-4. Հայաստանում միգրանտների զբաղվածության հիմնական ոլորտները

Ոլորտ	Մինչև 2005 թ. (%)	Մինչև 2002 թ. (%)
Շինարարություն	32.1	16.3
Արտադրություն	15.0	9.3
Գյուղատնտեսություն	11.3	15.9
Տրանսպորտ	10.3	6.6
Ծառայություններ	9.1	22.9
Առևտուր	7.7	15.4
Կրթություն	4.3	4.4
Այլ	10.2	9.2
Ընդամենը	100.0	100.0

Միգրանտների մեծամասնությունը զբաղված էր մասնավոր հատվածում (59.7%), մոտ 20%-ը՝ պետական հիմնարկություններում, իսկ 21%-ն էլ ինքնազբաղված էր (ներառյալ ֆերմերները՝ 7.7%):

Հարցվողների մեծամասնությունը (60.2%) նշել է, որ Հայաստանում աշխատելու ընթացքում արտերկրում աշխատող իրենց ազգականների ամսական եկամուտը 50,000 դրամը չէր գերազանցում: Յուրաքանչյուր հինգերորդ միգրանտ վաստակում էր 50,000-100,000 դրամ և միգրանտների միայն 3.7%-ն է վաստակել 100,000 դրամից ավելի: Հայաստանում միգրանտների հաշվարկված միջին աշխատավարձը կազմել է 44,000 դրամ: 2005 թ.-ի հարցման տվյալների համաձայն, մինչև 2002 թ. Հայաստանում աշխատած միգրանտների միջին ամսական եկամուտը գրեթե նույնն է եղել (46,000 դրամ):



Դեպքերի մեծամասնությունում (62.1%) Հայաստանում աշխատելու ընթացքում միգրանտները վաստակում էին տնային տնտեսության ընդհանուր եկամտի կեսից պակասը (միջինում՝ 42.5%-ը): Ուստի կարելի է ասել, որ նախքան միգրանտի արտերկիր մեկնելը, տնային տնտեսության միջին ամսական եկամուտը կազմել է մոտ 104,000 դրամ: Այս ցուցանիշը փոքր-ինչ ավելի մեծ էր 2005 թ.-ին: 2002-2005 թթ. աշխատանքային միգրացիայում ներգրավված տնային տնտեսությունների միջին ամսական եկամուտը մինչև միգրանտի մեկնումը կազմում էր 117,000 դրամ: Այս փոփոխության համար մենք ավելի լավ բացատրություն չենք կարող առաջարկել, քան այն, որ 2007 թ.-ի հարցման ժամանակ հարցվողներն իրենց եկամուտների մասին խոսելիս՝ դրանք հավանաբար ավելի են թերազնահատել, քան 2005 թ.-ին:

ԳԼՈՒԽ 4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

2005-2007 ԹԹ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՔԱՐՏԵԶԸ

Արտագնա աշխատանքի համար հայ միգրանտների ամենահաճախ ընտրած երկիրը շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնությունը: Ավելին, ՌԴ մեկնող միգրանտների տոկոսը 2002-2004 թթ.-ի 88%-ից 2005-2006 թթ.-ին հասել է 93%-ի: Թեև այլ երկրներ (ոչ ՌԴ) մեկնած միգրանտների բացարձակ թիվը շատ փոքր էր իմաստալից քանակական վերլուծություն կատարելու համար (32 մարդ երկու ընտրանքներից), որակական հետազոտության ընտրանքը ներառում էր այլ երկրներ մեկնած մի քանի միգրանտների, և նրանց փորձը ներկայացված է Գլուխ 7-ում:

Աղյուսակ 4-1. Ուղևորության երկրները

Երկիր	Դեպքերի թիվը	Տոկոս
ՌԴ	418	92.9
ԱՄՆ	8	1.8
Ուկրաինա	7	1.6
Իսպանիա	5	1.1
Ղազախստան	4	0.9
Ֆրանսիա	3	0.7
Հունաստան	2	0.4
Ավստրիա	1	0.2
Վրաստան	1	0.2
Սուդան	1	0.2
Ընդամենը	450	100.0

Ուղևորության երկրի ընտրության մասին խոսելիս միգրանտների 3/4-ից ավելին նշել է, որ ընտրել է այս կամ այն երկիրը, որովհետև ընկերներն ու բարեկամները բնակվում են այդ երկրում: Մեկ այլ հիմնավորում էր այն, որ այդ երկրում աշխատանք գտնելն այլ երկրների համեմատ ավելի հեշտ է թվացել: Միգրանտների նշած այլ պատճառաբանումներից էին երկիր մուտք գործելու դյուրինությունը և երկրում մեծ հայկական համայնքի առկայությունը: Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելով, Ռուսաստանն իսկապես ամենանպատակահարմար ընտրությունն է թվում:

Աղյուսակ 4-2. Ուղևորության երկրի ընտրության վրա ազդող գործոնները

Գործոն	Տոկոս
Տվյալ երկրում են բնակվում ընկերները կամ ազգականները	76.6
Այնտեղ հեշտ է աշխատանք գտնել	61.7
Ընդունող երկրի լեզվի իմացություն	29.9
Հեշտ է մուտք գործել երկիր (չի պահանջվում մուտքի արտոնագիր)	14.9
Այնտեղ շատ հայեր են ապրում	10.0


Քանի որ միգրանտների գերակշիռ մեծամասնությունն աշխատանք է փնտրել Ռ-Դ-ում, ուստի աշխատանքային միգրացիան քարտեզագրելու համար ստիպված էինք «ո՞ր երկիր» հարցը փոխարինել «որտե՞ղ Ռ-Դ-ում» հարցով: Հարցման արդյունքները կրկին ցույց են տալիս, որ միգրանտների մեծամասնությունն աշխատանք է փնտրել Մոսկվայում (39.8%): Աղյուսակ 4-2-ում ներկայացված է միգրանտների բաշխումն ըստ Ռուսաստանի յոթ դաշնային շրջանների, և յուրաքանչյուր շրջանում միգրանտների կողմից առավել հաճախ ընտրված քաղաքները:

Աղյուսակ 4-2. Միգրանտների նպատակակետերը Ռ-Դ-ում

Գաշնային շրջան	Տոկոս	Ամենահաճախ ընտրվող քաղաքները
Կենտրոնական	48.6	Մոսկվա, Պողոմոսկովյե
Վոլգա	13.3	Սամարա, Օրենբուրգ, Պերմ
Հարավային	10.0	Ռոստով, Սոչի, Ստավրոպոլ
Հեռավոր արևելյան	8.8	Խաբարովսկ, Յակուտսկ, Վլադիվոստոկ
Հյուսիս-արևմտյան	6.5	Սանկտ Պետերբուրգ, Սիկտիվկար
Սիբիր	6.5	Կեմերովո, Նովոսիբիրսկ, Կրասնոյարսկ
Ուրալ	6.2	Չելյաբինսկ, Տյումեն, Եկատերինբուրգ

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

2007 թ.-ի հարցման ուրախալի բացահայտում էր այն, որ միգրանտների մեծամասնությունը նախօրոք պլանավորել է իր ուղևորությունը և նախապես ձեռք բերել դրա վերաբերյալ որոշակի պայմանավորվածություններ: Միգրանտների մեծամասնությունը (70.4%) աշխատանքը գտել էր դեռևս մեկնումից առաջ: Այս խմբի միգրանտների մեծամասնությունը որոշակի պայմանավորվածություն է ունեցել նաև աշխատանքի նկարագրության, աշխատավարձի չափի և աշխատանքային պայմանների վերաբերյալ:



Ի հակադրություն սրան, 2005 թ.-ի հարցման արդյունքների համաձայն, 2002-2004 թթ.-ին արտերկիր մեկնած միգրանտներից յուրաքանչյուր երկրորդը մեկնումից առաջ պատկերացում չուներ վարձատրության վերաբերյալ, իսկ յուրաքանչյուր երրորդը չգիտեր, թե ինչ աշխատանք պետք է կատարի:

Աշխատանքով ապահովված լինելու և պայմանները նախապես ճշտելու՝ միգրանտների շահագրգռվածությունը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է նախկին միգրացիոն փորձով՝ թե՛ միգրանտի, և թե՛ նրա ծանոթների: Մեկ այլ հնարավոր բացատրություն է այն, որ միջնորդավորված ուղևորությունների թիվը 55%-ից աճել է մինչև 65%: Մեծամասամբ միգրանտի ուղևորությունները կազմակերպել են ուղևորության երկրում ապրող ընկերները կամ ազգականները (28%): Միգրանտների 12%-ին այս հարցում աջակցել են ուղևորության երկրում բնակվող մասնավոր միջնորդները, իսկ 10%-ն օգտվել է հայաստանաբնակ միջնորդների ծառայություններից: Թեև Հայաստանում կան արտերկրում գործող գործակալությունների ծառայություններից օգտվել է միգրանտների փոքրամասնությունը, նրանց տոկոսը 4.6%-ից (2002-2004 թթ.) աճել է մինչև 7% (2005-2006 թթ.):

Միջնորդները մեծամասամբ խոստացել են օգնել միգրանտներին աշխատանք գտնելու հարցում (76.4%): Մյուսները խոստացել են հոգալ

միգրանտների ճանապարհաձախար (33.6%), վճարել բնակարանի և սննդի համար (22.8%), օգնել կացարան գտնել (20.4%) կամ պարտքով գումար տրամադրել (12.8%): Ինչպես և 2005 թ.-ին, հարցվողների գերակշիռ մեծամասնությունն ասել է, որ միջնորդները կատարել են իրենց պարտավորություններն ու խոստումները ամբողջությամբ կամ գոնե մասամբ (83% և 12.6% համապատասխանաբար):


Միգրանտների մոտ 30%-ը չի պլանավորել իր վերջին ուղևորության տևողությունը (2005 թ.-ին միգրանտների այս խումբը 40.3% էր կազմում): Մնացած 70%-ի մեծամասնությունը պլանավորել է մնալ ուղևորության երկրում 6 ամսից մինչև 1 տարի, և միայն 9%-ն է ավելի երկարատև ուղևորություն պլանավորել: Ինչպես և 2005 թ.-ին, այժմ էլ ուղևորությունների պլանավորված միջին տևողությունը 8 ամիս էր:

ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ԵԿԱՄՈՒՏԸ ԸՆԴՈՒՆՈՂ ԵՐԿՐՈՒՄ

Ուղևորության սեզոնայնությունն ու իրական տևողությունը

Միգրացիոն հոսքերի սեզոնային առանձնահատկությունների առումով 2007 թ.-ի հարցման արդյունքները համահունչ են 2005 թ.-ի հարցման արդյունքներին:

Միգրանտների 75%-ից ավելին Հայաստանից մեկնել է գարնան սկզբին, ընդ որում մեկնումների ամենաակտիվ ամիսը մարտն էր: Միգրանտների մեծամասնությունը (78%) վերադարձել է Հայաստան հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում, բայց ավելի հաճախ՝ ամառորի տոներին մոտ:



Ինչ վերաբերում է վերջին ուղևորության տևողությանը, միգրանտների մեծամասնությունն արտերկրում աշխատել է 5-10 ամիս (68.9%): Ուղևորությունների միջին տևողությունը հավասար էր ուղևորությունների միջին պլանավորված տևողությանը՝ 8 ամիս: (2005 թ.-ի հարցման տվյալների համաձայն՝ միգրանտներն ուղևորության երկրում պլանավորվածից ավելի երկար ժամանակ էին անցկացրել:)

Աղյուսակ 4-3. Վերջին ուղևորության իրական տևողությունը ի համեմատ պլանավորվածի

Տևողություն	Իրական (%)	Պլանավորված (%)
Մինչև 6 ամիս	25.7	33.7
6 ամսից մինչև 1 տարի	68.5	57.5
1 տարուց ավելի	5.8	8.8

Աշխատանք


Միգրանտների 80%-ից ավելին սկսել է աշխատել ընդունող երկիր ժամանելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Ավելին, միգրանտների 54.7%-ը աշխատանքն սկսել է առաջին իսկ շաբաթվա ընթացքում: Այս արդյունքները կանխատեսելի էին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ միգրանտների մեծամասնությունն աշխատանքի վերաբերյալ պայմանավորվածություն էր ձեռք բերել մեկնումից առաջ: Ուստի բնական է նաև, որ աշխատանքի վերաբերյալ նախօրոք պայմանավորվածություն ունեցած միգրանտների 70%-ն աշխատանքի է անցել ժամանումից ընդամենը 1-3 օր անց: Այն միգրանտները, ովքեր պլանավորել էին աշխատանք գտնել ընդունող երկիր ժամանելուց հետո, կարողացել են դա անել երկիր ժամանելուց միջինը 32 օր անց, իսկ մոտ 8%-ին այդպես էլ չի հաջողվել աշխատանք գտնել:

Միգրանտների ավելի քան երկու երրորդը կատարել է սեզոնային կամ մեկանգամյա աշխատանք, և նրանց գերակշիռ մեծամասնությունն աշխատել է շինարարության ոլորտում: Թեև միգրանտների արտագնա աշխատանքի տիպի ու ոլորտի ընդհանուր համամասնությունները չեն փոխվել 2005 թ.-ի տվյալների համեմատ, 2005-2006 թթ.-ին աշխատանքի ոլորտները պակաս բազմազան են եղել: Շինարարությունից զատ այլ ոլորտներում աշխատող միգրանտների տոկոսը 38%-ից կրճատվել է մինչև 22.2%:

Աղյուսակ 4-4. Ընդունող երկրում միգրանտների աշխատանքի ոլորտները

Ոլորտ	2005-2006 (%)	2002-2004 (%)
Շինարարություն	77.3	62.0
Առևտուր	5.3	11.5
Մասնագիտական ծառայություններ	3.4	10.6
Այլ ծառայություններ	4.3	
Արտադրություն	4.4	7.2
Տրանսպորտ	2.3	3.4
Այլ	3.0	5.3
Ընդամենը	100.0	100.0


Ինչ վերաբերում է աշխատանքային հարաբերությունների իրավական կարգավորմանը, ապա իրավիճակն անփոփոխ է մնացել: Միգրանտներից քչերն են գրավոր աշխատանքային պայմանագիր կնքել, մինչդեռ նրանց գերակշիռ մեծամասնության հարաբերությունները գործատուի հետ հիմնված են եղել սուկ բանավոր համաձայնության վրա: Թեև գործատուների հետ աշխատանքային պայմանագիր կնքած միգրանտների թիվը փոքր-ինչ ավելացել է, իսկ այն միգրանտների թիվը, ովքեր աշխատանքն սկսելուց առաջ գործատուի հետ աշխատանքային պայմանների վերաբերյալ առհասարակ որևէ պայմանավորվածություն չեն ունեցել, կրճատվել է, այնուամենայնիվ, դրական շարժը չափազանց փոքր է:



Միաժամանակ, չնայած երկկողմանի ռիսկի առկայությանը, որն առաջ է գալիս իրավական հիմքեր չունեցող աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելիս, կարելի է եզրակացնել, որ մեծամասամբ թե՛ միգրանտը և թե՛ գործատունը բավարարված են արդյունքներով: Միգրանտների մոտ 84%-ն ասում է, որ գործատուն լիովին պահպանել է նախօրոք համաձայնեցված պայմանները (թե՛ գրավոր և թե՛ բանավոր պայմանավորվածության դեպքում), իսկ 14.4%-ի դեպքում այդ պայմանները պահպանվել են մասամբ: Գործատուներն էլ մյուս կողմից նախընտրում են ոչ ֆորմալ աշխատանքային հարաբերությունները, քանի որ այդպիսով կարողանում են խուսափել հարկերից: (Ոչ օրինական աշխատանքային հարաբերությունների պատճառներն ու հետևանքներն ավելի մանրամասն քննարկված են Գլուխ 7-ում:)

Միգրանտների աշխատանքային օրվա միջին տևողությունը կազմել է 10 ժամ (նույն զնահատականը գրանցվել էր 2005 թ.-ի հարցման ժամանակ): Միգրանտների մեծամասնությունը (52.1%) աշխատել է լրիվ դրույքաչափով (8-10 ժամ), յուրաքանչյուր երրորդ միգրանտն օրական աշխատել է 11-12 ժամ (37.3%), և միայն 6.4%-ն է աշխատել ոչ լրիվ դրույքաչափով (1-7 ժամ): Միգրանտների մնացած 4.1%-ը աշխատել է օրական 12 ժամից ավելի: Աշխատանքային միգրանտների միայն 46.4%-ն է ունեցել կանոնավոր հանգստյան օրեր, 35.6%-ը հազվադեպ է հանգստյան օրեր ունեցել, իսկ 18%-ն աշխատել է ընդհանրապես առանց հանգստյան օրերի:

Ինչ վերաբերում է աշխատանքային միգրանտների եկամուտներին, ապա հարցումը ցույց է տալիս, որ նրանց միջին ամսական եկամուտը 2005 թ.-ի տվյալների համեմատությամբ աճել է ավելի քան 50%-ով (643 ԱՄՆ դոլար՝ 2005 թ.-ի 410 ԱՄՆ դոլարի փոխարեն): 2005-2006 թթ.-ին միգրանտների կեսից ավելին, արտերկրում աշխատելով, ամսական վաստակել է 400-800 ԱՄՆ դոլար: Այսպիսով, եթե միգրանտների միջին ամսական եկամուտը կազմում է 643 ԱՄՆ դոլար, իսկ ուղևորության միջին տևողությունը 8 ամիս է, ապա ստացվում է, որ մեկ ուղևորության ընթացքում միգրանտը միջինում վաստակում է 5140 ԱՄՆ դոլար:



Միաժամանակ, շատ կարևոր է հաշվի առնել վերջին երկու տարիների ընթացքում ԱՄՆ դոլարի զգալի արժեզրկումը, որի հետևանքով բացարձակ թվերի աճը դեռևս չի նշանակում, որ միգրանտների իրական եկամուտներն ավելացել են նույն չափով: Իրականում նրանց ամսական միջին եկամուտն ավելացել է միայն 16%-ով. 193,000 դրամից (410 ԱՄՆ դոլար՝ հաշվարկված 2005 թ.-ի սկզբին շուկայում հաստատված 470 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց փոխարժեքով) հասնելով 224,000 դրամի (643 ԱՄՆ դոլար՝ հաշվարկված 2007 թ.-ի սկզբին շուկայում հաստատված 350 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց փոխարժեքով): Եթե հաշվի առնենք նաև գնաճի գործոնը, ապա նույնիսկ այս 16% աճը դժվար թե միգրանտների ընտանիքների կենսամակարդակի վրա էական ազդեցություն ունենա:

Հաշվի առնելով այս ամենը, զարմանալի չէ, որ միգրանտները նշել են, թե այլևս չեն քի Հայաստանը՝ միջինում 200,000 դրամ (կամ մոտ 570 ԱՄՆ դոլար) ամսական եկամուտի դեպքում, մինչդեռ 2005 թ.-ին հարցված միգրանտներին կգոհացներ 340 ԱՄՆ դոլար ամսական եկամուտը:

Գրամական փոխանցումներ

Ըստ հարցման արդյունքների, յուրաքանչյուր հինգերորդ միգրանտ վերջին ուղևորության ընթացքում չի կարողացել գումար ուղարկել ընտանիքին (19.5%, կամ գրեթե նույնքան, որքան 2005 թ.-ի տվյալների համաձայն՝ 18.8%): Այն միգրանտների մեծամասնությունը, ովքեր կարողացել են գումար խնայել արտերկրում, իրենց ընտանիքներին առաջին դրամական փոխանցումն են ուղարկել մեկնումից հետո մեկ կամ երկու ամիս անց (69.3%):

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ որոշակիորեն ավելացել է այն միգրանտների թիվը, ովքեր գերադասում են դրամական փոխանցումները կատարել բանկային համակարգի և ոչ թե մասնավոր անձանց միջոցով: Ընդհանուր առմամբ, միգրանտների 86.2%-ը վերջին ուղևորության ընթացքում առնվազն մեկ անգամ բանկի միջոցով դրամական փոխանցում է կատարել, իսկ 15.5%-ը գումար է փոխանցել անհատների միջոցով (2005 թ.-ի տվյալների համաձայն միգրանտների 84.8%-ը հարազատներին գումար էր փոխանցում բանկի, 21.0%-ը՝ մասնավոր անձանց միջոցով): Միգրանտների կեսից ավելին իրենց խնայողությունների մի մասը բերել է իր հետ:

Ընդհանուր առմամբ, վերջին ուղևորության ընթացքում յուրաքանչյուր միգրանտ ընտանիքին ուղարկել կամ իր հետ բերել է միջինը 2720 ԱՄՆ դոլար, ինչը, դարձյալ բացարձակ թվերով, նշանակում է 2005 թ.-ի 1540 դոլարի համեմատ 75%-անոց աճ: Սա նշանակում է, որ 5140 ԱՄՆ դոլար կազմող միջին եկամուտի մոտ 47%-ը միգրանտները ծախսել են ուղևորության երկրում, իսկ մնացած 53%-ն ուղարկել են Հայաստանում ապրող իրենց ընտանիքներին:

Ինչպես արդեն նշել ենք Գլուխ 2-ում, հետազոտության տվյալների տարածման արդյունքում միգրանտների բացարձակ թիվը գնահատվել է 54,000-74,000 մարդ 2005 թ.-ին և 60,000-81,000՝ 2006 թ.-ին, այսինքն 2005-2006 թթ.-ին ընհանուր առմամբ կատարվել է 114,000-155,000 աշխատանքային ուղևորություն արտերկիր: Հարցման արդյունքների համաձայն՝ այս ուղևորությունների 80.5%-ը (կամ 91,000-124,000 ուղևորություն) «արդյունավետ» է եղել: Հետևաբար, աշխատանքային միգրանտներից ստացված դրամական փոխանցումների ընդհանուր ծավալը դիտարկվող ողջ ժամանակահատվածի ընթացքում կազմել է 250-339 միլիոն ԱՄՆ դոլար, կամ 118-162 միլիոն դոլար 2005 թ.-ի և 131-177 միլիոն դոլար՝ 2006 թ.-ի ընթացքում: 2007 թ.-ի հարցման արդյունքների համաձայն 2005-2006 թթ.-ին միգրանտների դրամական փոխանցումների մոտ 60%-ը (կամ 149-202 միլիոն ԱՄՆ դոլար) կատարվել է բանկային համակարգով:

Գումարից բացի, միգրանտների մոտ 30%-ը Հայաստան է բերել 700 ԱՄՆ դոլար միջին արժուրությամբ սնունդ, հագուստ, երկարաժամկետ օգտագործման ապրանքներ և ավտոմեքենաներ:

ԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՈՂ ԵՐԿՐՈՒՄ

Արտերկրում աշխատելու ընթացքում միգրանտների կեսից ավելին (50.7%) վճարել է կացարանի համար՝ բնակարան է վարձակալել՝ մենակ կամ ընկերների/ազգականների հետ (42.5%), կամ էլ վճարել է հյուրանոցում կամ հանրակացարանում սենյակի համար (8.2%): Ընդ որում, 2002-2004 թթ. համեմատ զգալիորեն ավելացել է այն միգրանտների տոկոսը, ովքեր կացարանի ծախսերը կիսել են ընկերների կամ ազգականների հետ (9.6%-ից մինչև 22.9%), և կրճատվել է այն միգրանտների թիվը, ովքեր կարողացել են իրենց թույլ տալ առանձին բնակարան կամ սենյակ վարձել (29.0%-ից մինչև 19.6%):

Սա կարող է պայմանավորված լինել մի քանի հանգամանքներով. Ռ-Գ անշարժ գույքի շուկայում աճող գներով, տարադրամի շարունակական արժեզրկմամբ, ուստի և ընտանիքների կարիքները հոգալու համար ավելի շատ գումար խնայելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև Ռ-ուսաստանում և հատկապես Մոսկվայում ապրող և աշխատող հայերի վտանգվածությամբ (ինչպես երևում է հետազոտության որակական մասի արդյունքներից):

Աղյուսակ 4-5. Կացարանի տիպերը

Տարրերակ	2005-2006 (%)	2002-2004 (%)
Սենյակ, բնակարան կամ տուն է վարձել ընկերների կամ ազգականների հետ	22.9	9.6
Առանձին սենյակ, բնակարան կամ տուն է վարձել	19.6	29.0
Ընկերները կամ ազգականները տեղ են հատկացրել իրենց տանը	17.3	20.5
Ապրել է աշխատավայրում	17.2	27.5
Ապրել է գործատուի տանը	11.9	3.8
Ապրել է հանրակացարանում	8.0	6.7
Գործատուն բնակարան է վարձել	1.1	0.0
Տուն կամ բնակարան ունի ընդունող երկրում	0.8	0.9
Այլ	1.2	2.0
Ընդամենը	100.0	100.0


Միգրանտների 90%-ից ավելին գոհ էր արտերկրում իր բնակարանային պայմաններից, գնահատելով դրանք որպես «շատ լավ» (25.5%) կամ «բավարար» (65.0%): Միաժամանակ, միգրանտների շուրջ 75%-ն ասել է, որ արտերկրում իրենց բնակարանային պայմանները նույնն են կամ ավելի լավն են, քան Հայաստանում (25.9% և 45.1% համապատասխանաբար): Բնակարանային պայմանների վերաբերյալ գոհունակություն հայտնաձև միգրանտների թվի աճը կարող է պայմանավորված լինել նրանով, որ զգալիորեն կրճատվել է այն միգրանտների թիվը, ովքեր ապրել են աշխատավայրում և ավելացել է այն միգրանտների թիվը, ովքեր ապրել են գործատուի հետ (2005 թ.-ի տվյալների համաձայն, յուրաքանչյուր երրորդ միգրանտի բնակարանային պայմաններն արտերկրում եղել են ավելի վատ, քան Հայաստանում):

**ԳԼՈՒԽ 5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ
ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ


Տրամաբանական կլիներ ակնկալել, որ վերջին տարիներին հայկական աշխատանքային շուկայի ընդհանուր զարգացմանը զուգընթաց, պետք է որոշակիորեն փոխվեին նաև միգրանտների՝ արտերկիր մեկնելու պատճառները: Իրոք, թեև դեպքերի մեծամասնությունում միգրանտներին արտերկիր են տանում Հայաստանում զբաղվածության հետ կապված

խնդիրները (93.5%) և միգրանտների հիմնական՝ «Հայաստանում աշխատանք չկա» փաստարկը դարձյալ ամենահաճախն է նշվում (46.5%), այնուամենայնիվ այս կարծիքի հետ այժմ արդեն համաձայն չէ միգրանտների մեծամասնությունը (2005 թ.-ին միգրանտների կեսից ավելին նշել էր, որ արտերկրում աշխատանք փնտրելու հիմնական պատճառը Հայաստանում աշխատանքի բացակայությունն է): Այսօր արդեն միգրանտների 43.0%-ն է նշում, որ միգրացիայի հիմնական պատճառը Հայաստանում բարձր վարձատրվող աշխատանքի բացակայությունն է: Իսկ Հայաստանում մասնագիտական աշխատանքի բացակայությունը, որպես արտերկրում աշխատանք որոնելու պատճառ, 2005 թ.-ի համեմատ նշվել է մոտ երկու անգամ ավելի հաճախ (4.8%՝ 2005 թ.-ի 2.9%-ի փոխարեն): Այսուհանդերձ, ինչպես արդեն նշել ենք, հայկական աշխատանքային շուկայի զարգացումը ասիմետրիկ բնույթ է կրում, և այդ զարգացումից շահում են հիմնականում Երևանի բնակիչները: Արտերկրում աշխատանք որոնելու պատճառների և միգրանտների բնակավայրի համեմատությունն առավել պատկերավոր է դարձնում աշխատանքային շուկայի անհամաչափ զարգացումը:



2005 թ.-ի համեմատ, ավելի է ընդգծվել կապը միգրանտների տարիքի և արտերկրում աշխատելու նրանց գլխավոր պատճառների միջև: Ինչպես երևում է Պատկեր 5-2-ից (տե՛ս հաջորդ էջը), 21-30 տարեկան միգրանտների մոտ 60%-ը Հայաստանից մեկնել է աշխատանք չգտնելու պատճառով, մինչդեռ 31-40 տարիքային խմբի համար հիմնական պատճառ էր ցածր աշխատավարձը: 40-ից բարձր տարիք ունեցող միգրանտների համար այս

երկու պատճառները գրեթե հավասար կարևորություն են ունեցել: Այս տարբերությունները կարող են բացատրվել աշխատանքային շուկայում տարբեր տարիքային խմբերի մրցունակությամբ:




Որպես արտերկրում աշխատանք փնտրելու այլ պատճառներ միգրանտները առավել հաճախ նշել են Հայաստանի զարգացման հնարավորությունների բացակայությունը և մասնավոր ձեռնարկատիրությամբ զբաղվելու խոչընդոտները: Ինչևէ, այս պատճառներից յուրաքանչյուրը նշել է հարցվողների ոչ ավել, քան 5%-ը:

ԱՐԴԱՐԱՑԱԾ ԵՎ ՉԱՐԴԱՐԱՑԱԾ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

Ինչպես և 2005 թ.-ին, միգրանտների ճնշող մեծամասնությունն ասել է, որ իրենց վերջին ուղևորությունն ամբողջությամբ կամ գոնե մասամբ արդարացրել է իրենց ակնկալիքները (88.7%): Միգրանտների մեկ տասներորդն է միայն դժգոհ ուղևորության արդյունքներից:

Միգրանտները մեծամասամբ



պլանավորում էին օգտագործել խնայված գումարը՝ Հայաստանում ապրող ընտանիքների հիմնական կարիքները հոգալու համար: Յուրաքանչյուր չորրորդ միգրանտ պլանավորել է գումար վաստակել տան վերանորոգման համար, իսկ յուրաքանչյուր հինգերորդ միգրանտ խնայված գումարը ցանկանում էր օգտագործել երեխաների ուսման ծախսերը հոգալու կամ տևական օգտագործման իրեր ձեռք բերելու համար (օրինակ կահույք, կենցաղային տեխնիկա և այլն): Աղյուսակ 5-1-ն ամփոփում է այն նպատակները, որոնց համար միգրանտները պլանավորում էին ծախսել խնայված գումարները, և թե որքանով է դա նրանց հաջողվել:

Աղյուսակ 5-1. Ինչ նպատակների համար են միգրանտները նախատեսել ծախսել խնայված գումարը, և որքանով է դա նրանց հաջողվել

Պլանավորված ծախսեր	Ծախսը պլանավորած միգրանտների տոկոսը	Միգրանտների տոկոսը, ովքեր հիմնականում կարողացել են իրականացնել պլանավորածը
Ընթացիկ ծախսեր (սնունդ, հագուստ, կոմունալ ծախսեր, և այլն)	86.7	52.6
Բնակարանի/տան վերանորոգում	24.0	20.4
Ուսման հետ կապված ծախսեր (ուսման վարձ և այլն)	20.9	55.3
Տևական օգտագործման իրերի ձեռքբերում (կահույք, կենցաղային տեխնիկա, մեքենա և այլն)	19.3	32.2
Բնակարանի/տան ձեռքբերում կամ կառուցում	16.0	12.5
Կարևոր ընտանեկան արարողությունների հետ կապված ծախսեր (հարսանիք, տարեդարձ և այլն)	14.9	41.8
Պարտքերի մարում	8.7	56.4
Բուժման հետ կապված ծախսեր	8.2	47.2
Մասնավոր բիզնեսի հիմնում կամ ընդլայնում	5.3	4.2
Արտադրական միջոցների ձեռքբերում (սարքավորումներ, հող, անասուն և այլն)	3.3	40.0


ԳԼՈՒԽ 6. ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՆԵՐՔԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ներպետական միգրացիայի տեմպը շարունակում է մնալ բավականին բարձր: Հարցման անցկացման պահին (2007 թ. փետրվար-մարտ), հարցված տնային տնտեսությունների անդամների 2.9%-ն ապրում էր իրենց ընտանիքներից առանձին՝ Հայաստանի որևէ այլ բնակավայրում: Եվս 6.7%-ը, կամ մոտ 1.5 անգամ ավելի մարդ, քան 2005 թ.-ին, կցանկանար ապրել և աշխատել ՀՀ մեկ այլ բնակավայրում և մեծամասամբ՝ Երևանում (4.4%): Հարցված ընտանիքների անդամների 2.2%-ն արդեն իսկ հստակ պլանավորել էր տեղափոխվել 2007 թ.-ի ընթացքում, ընդ որում, 1.5%-ը պատրաստվում էր տեղափոխվել Երևան:

Եթե այս տվյալները տարածենք հանրապետության ողջ բնակչության թվի վրա, ապա կստանանք, որ 2007 թ.-ին ներքին միգրանտների թիվը կարող է կազմել 139,000-188,000, որոնցից 80,000-106,000-ն արդեն բնակվում է ոչ իր հարազատ քաղաքում կամ գյուղում, իսկ 59,000-82,000 մարդ, ամենայն հավանականությամբ, կտեղափոխվի 2007 թ.-ի ընթացքում: Ընդ որում 2007 թ.-ին վերջին Երևանը կհյուրընկալի 69,000-105,000 միգրանտ հանրապետության տարբեր շրջաններից, որոնցից 30,000-47,000-ն արդեն բնակվում է Երևանում, իսկ 39,000-58,000-ը պատրաստվում է բնակություն հաստատել մայրաքաղաքում 2007 թ.-ի ընթացքում:

Ներպետական միգրացիայի աճող ակտիվությունը, ամենայն հավանականությամբ, դարձյալ պայմանավորված է հայկական աշխատանքային շուկայի ներկայիս վիճակով և Երևան քաղաքի ու հանրապետության մյուս շրջանների միջև կենսամակարդակի, ինչպես նաև տարբեր ապրանքների ու ծառայությունների հասանելիության աճող տարբերությամբ: Ահա թե ինչու է ներքին



միգրանտների նպատակակետը Երևանը, իսկ Երևանից հանրապետության այլ շրջաններ տեղափոխվել ցանկացողների թիվը շատ փոքր է (0.8%): Այլ քաղաքային բնակավայրերից ներքին միգրացիայի ակնկալվող տեմպը կազմում է 1.9%, իսկ գյուղական բնակավայրերից՝ 2.7%:

Սույն հետազոտության արդյունքների համաձայն, դեպի Երևան միգրացիոն հոսքը հիմնականում կներառի Շիրակի, Կոտայքի, Արմավիրի և Լոռու մարզերը: Երևան քաղաք տեղափոխվել ցանկացողների 70%-ից ավելին մինչև 35 տարեկան է և այս խմբում կանանց ու տղամարդկանց թիվը հավասար է: Նշենք նաև, որ ներքին միգրանտների մեծամասնությունը (58%) պատրաստվում է մշտական բնակություն հաստատել Երևանում, իսկ մյուս մասը պատրաստվում է ժամանակավորապես ապրել, աշխատել կամ սովորել մայրաքաղաքում:

ԱՐՏԱՔԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ

Աշխատանքային միգրացիա

Հարցման արդյունքների համաձայն, հարցված ընտանիքների անդամների 3.2%-ը ցանկանում է աշխատել արտերկրում: Իսկ սա նշանակում է, որ 2005 թ.-ի համեմատ արտերկրում աշխատել ցանկացողների թիվը կրճատվել է ավելի քան երկու անգամ (6.9%):

Սույն հետազոտությունը թույլ է տալիս ենթադրել, որ 2007 թ.-ին աշխատանքային միգրանտների թիվը կկազմի հանրապետության մշտական բնակչության թվի 2.5-3.3%-ը, այսինքն 80,000-106,000 մարդ: Մեր կանխատեսումների համաձայն, միգրացիոն հոսքը հիմնականում կազմված կլինի միգրանտներից, ովքեր արդեն աշխատել են արտերկրում 2005-2006 թթ.-ի ընթացքում:

Աղյուսակ 6-1. 2007 թ.-ի միգրացիոն հոսքի կանխատեսվող կառուցվածքը

Խումբ	Տոկոս	Բացարձակ թիվ
Միգրանտներ, ովքեր աշխատել են արտերկրում 2005-2006 թթ.-ի ընթացքում և արդեն մեկնել են 2007 թ.-ի սկզբին	21.5	17,000 - 23,000
Միգրանտներ, ովքեր աշխատել են արտերկրում 2005-2006 թթ.-ի ընթացքում և պլանավորում են մեկնել 2007 թ.-ի ընթացքում	42.5	36,500 - 48,000
Նոր միգրանտներ	33.0	26,500 - 35,000
Ընդամենը	100.0	80,000-106,000

Հարցման արդյունքների համաձայն, այն միգրանտների 87%-ը, ովքեր պլանավորում էին մեկնել 2007 թ.-ի ընթացքում կամ հարցման անցկացման պահին արդեն մեկնել էին, տղամարդիկ են, իսկ 13%-ը՝ կանայք: Նրանց 4/5-ից ավելին 20-50 տարեկան են (81.6%):

Ինչևէ, այս բոլոր գնահատումները հիմնականում հիմնված են մարդկանց մտադրությունների վրա, որոնք ի վերջո կարող են իրականացվել կամ չիրականացվել: Ուստի իրական միգրացիոն հոսքը կարող է կանխատեսվածից ավելի փոքր լինել, իսկ միգրանտների սոցիալ-ժողովրդագրական պատկերն էլ կարող է տարբերվել մեր ակնկալիքներից: Սա առաջին հերթին վերաբերում է կանանց միգրացիոն ակտիվության աճին: 2005 թ.-ի հարցման արդյունքների համաձայն, կանայք պետք է կազմեին ընդհանուր միգրացիոն հոսքի մոտ 12.0%-ը, սակայն ի վերջո այդ թիվը կազմեց միայն 6.5%: Այսպիսով, կարծում ենք, որ բավարար հիմքեր չկան կարծելու, թե աշխատանքային միգրացիայում ներգրավված կանանց թիվը կարող է մեկ տարվա ընթացքում կրկնապատկվել:

Մշտական էմիգրացիա

Ինչ վերաբերում է մշտական էմիգրացիային, ապա հարցված ընտանիքների անդամների 3.3%-ը կցանկանար բնակություն հաստատել արտասահմանում: Այս թիվը նույնպես բավականին կրճատվել է 2005 թ.-ի ցուցանիշի համեմատությամբ (5.1%): Միգրացիայի այս տեսակի կանխատեսվող տեմպը (այն մարդկանց տոկոսը, ովքեր պլանավորում են 2007 թ.-ի ընթացքում ընդմիջտ լքել երկիրը) 0.7-1.1% է և քիչ է տարբերվում 2005 թ.-ի ցուցանիշից (0.5-0.9%): Այս տվյալը բնակչության ընդհանուր թվի վրա տարածելով, կստանանք, որ 2007 թ.-ի ընթացքում 22.000-36.000 ՀՀ քաղաքացի պատրաստվում է մշտապես արտագաղթել Հայաստանից: Նրանց 80%-ը 50 տարեկանից երիտասարդ է, սակայն այս խմբում կանանց և տղամարդկանց թիվը հավասար է:

ԳԼՈՒԽ 7. ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԹՎԵՐԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

Վերլուծության այս մասը կատարվել է միգրանտների կողմից հարցի մանրամասն և բազմակողմանի նկարագրության հիման վրա, ինչը թույլ է տվել ըմբռնելու նաև միգրացիայի մշակութային և հոգեբանական կողմը, ավելի լավ հասկանալու միգրանտների մոտեցումները և ավելի խորը բափանցելու միգրացիոն գործընթացի տարբեր կողմերի մեջ:

Վերլուծությունը կարդալով, ընթերցողը կարող է պատկերացնել, թե ովքեր են միգրանտները, հիմնականում ինչ խնդիրներ են ունենում, ինչն է նրանց դրդում մեկնել, ինչ կյանքով են ապրում արտերկրում և ինչպես են զնահատում իրենց միգրացիոն փորձառությունը վերադառնալուց հետո: Կարելի է ասել, որ սա ընդհանրացված պատմությունն է այն մարդկանց, ում ընտանիքը և տունը Հայաստանում է, բայց իրենք աշխատում և որոշ ժամանակ ապրում են արտերկրում:

Վերլուծությանը զուգահեռ ներկայացվում են նաև միգրանտների հետ հարցազրույցներից մեջբերումներ, որոնք հավելյալ տեղեկություն են տալիս միգրացիոն գործընթացի մասին: Խոսքերի հեղինակների անունները մտացածին են, սակայն մյուս տվյալները՝ սեռը, տարիքը և բնակության վայրը, իրական են:

ՈՎԵՐ ԵՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԸ

Հայաստանից աշխատանքային էմիգրացիայի խայտաբղետ պատկերը լավագույնս ներկայացնելու և բացատրելու նպատակով տարբերակել ենք միգրանտների հինգ հիմնական խմբեր. «Հոգատար հայրեր», «Հովանավորյալ միգրանտներ», ««Ձուկը ջրում», միգրանտներ», «Սիրողական միգրանտներ» և «Երջանիկ միգրանտներ»:

Խմբավորումը կատարվել է ոչ թե մեկ հատկանիշի հիման վրա, այլ ընդհանուր պատկերի սեզնետավորման միջոցով, թեև կան հատկանիշներ, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ: Դրանք են. մեկնելու առաջնային դրդապատճառը, մեկնելու և արտերկրում աշխատանք գտնելու ձևը, կեցության կարգավիճակը, ընդունող մշակույթում ադապտացիայի և սոցիալականացման գործընթացը, զբաղվածության ոլորտը և կենսակերպը, ապահովության զգացումը և հիմնախնդիրները: Կարևոր ենք համարում նշել ներկայացվող խմբերի ևս մի քանի առանձնահատկություն, ինչը կօգնի ընթերցողին ավելի լավ ըմբռնել դրանց (խմբերի) էությունը:

- Խմբերի սահմանները ճկուն են և հնարավոր է, որ որևէ խումբ ներկայացնող միգրանտը, տարիների ընթացքում փոխելով իր այդ խմբին պատկանելու հատկանիշները՝ հայտնվի մեկ այլ խմբում:

- Խմբերը նշված են որպես իդեալական, ընդհանրացված տիպեր, և հնարավոր է լինեն միգրանտներ, որ ոչ բոլոր հատկանիշներով են համապատասխանում այս կամ այն խմբին:
- Խմբերի անունները հիմք չեն տալիս կարծելու, որ որպես անվանում նշված հատկանիշը հատուկ է միայն այդ խմբին, պարզապես այդ խմբի պարագայում այն որոշիչ է և դրանով են պայմանավորվում մյուս հատկանիշները:

«Հոգատար հայրեր»

Հոգատար հայրերը միջին և բարձր տարիքի տղամարդիկ են միջնակարգ, երբեմն միջին մասնագիտական կրթությամբ, որոնք ապրում են, որպես կանոն, Հայաստանի փոքր քաղաքներում և գյուղերում և մեկնում են Ռուսաստան շինարարության ոլորտում աշխատելու: Հոգատար հայրերի մեկնելու ամենագլխավոր պատճառը ընտանիքի հոգսերը հոգալն է և ընտանիքի համար գումար վատակելը: Նրանք որպես կանոն Հայաստանից մեկնում են բրիգադով, կամ արդեն Ռուսաստան ժամանելիս ընդգրկվում են որևէ շինարարական բրիգադի մեջ: Ռուսաստան մեկնող միգրանտների մեջ Հոգատար հայրերն են, որ նախքան մեկնելը առավել մանրամասն են իմանում, թե ինչ է իրենց սպասվում Ռուսաստանում: Լինելով Ռուսաստան մեկնողների մեջ ամենատեղեկացվածը, նախքան մեկնելը նրանք ճշտում են կատարվելիք աշխատանքի բնույթը, աշխատավարձի չափը, մնալու տեղը, նաև թե որ կողմը պետք է հոգա սննդի հարցը՝ միգրանտն ինքը, թե գործատուն: Հոգատար հայրերի ճնշող մեծամասնությունը անօրինական միգրանտներ են (չունեն գրանցում և/կամ աշխատանքի թույլատվություն) և ստիպված են հնարավորինս խուսափել դրա հետ կապված բարդություններից:

Հոգատար հայրերն աշխատում են, կարելի է ասել, օրնիբուն, բնակվում են, որպես կանոն, անհարմար պայմաններում, բայց չեն դժգոհում, քանի որ նախապես գիտեն, որ իրենց բարեկեցիկ կյանք չի սպասվում: Նրանք հազվադեպ են դուրս գալիս այն տարածքից, որտեղ աշխատում են, որովհետև վախենում են ոստիկանի հանդիպելուց և իրենց անօրինական կեցության համար տույժի ենթարկվելուց: Մոսկվայում աշխատող միգրանտների համար երկրորդ մեծ վտանգը ռուս ծայրահեղ ազգայնականների խմբավորումներն են կամ, այլ կերպ ասած, սափրագլուխները: Այս խնդիրներին չբախվելու համար Հոգատար հայրերը հազվադեպ են դուրս գալիս փողոց, շփվում են հիմնականում իրար հետ, ինչի պատճառով գրեթե չեն սոցիալականացվում ռուսական մշակույթում: Նրանք տարբերվում են թե շարժունակ, թե խոսելառոճով, թե պահվածքով, ուստի չեն կարողանում խուսափել «աչք ծակելուց» և իրավապահներից ու ծայրահեղականներից աննկատ մնալուց: Հոգատար հայրերը հատկապես Մոսկվայում իրենց ամենաանապահով զգացող միգրանտներն են: Այդուհանդերձ այս մարդիկ, որպես կանոն, գոհ են վերադառնում Հայաստան և ամենայն հավանականությամբ նորից են գնալու:

Նրանք կարծես իրենց կյանքից ջնջում են միգրացիայի ժամանակահատվածը՝ այն համարելով «չկյանք», բայց այնուամենայնիվ «չկյանքում» փող են «շահում» կյանքի համար:

«Հովանավորյալ միգրանտներ»

Այս միգրանտների առանձնահատկությունն այն է, որ նրանք մեկնում են բարեկամի կամ հարազատի մոտ: Այն, որ նրանք համեմատաբար ապահովագրված են, կարող են հույս դնել ընդունող երկրում քիչ թե շատ հաստատված մարդու վրա և ունեն գիշերելու տեղ, էապես ազդում է նրանց զբաղմունքի, ապրելակերպի, ինքնագագոցողության և հեռանկարների վրա: Հովանավորյալ միգրանտները շատ մնան են Հոգատար հայրերին: Այս խմբում, իհարկե, կարելի է հանդիպել նաև կանանց և երիտասարդների: Կան նաև բարձրագույն կրթությամբ մարդիկ, սակայն կորիզը կրկին կազմում են միջին տարիքի տղամարդիկ, ովքեր աշխատում են հիմնականում Ռուսաստանում, բայց փոքր թվով մեկնում են նաև ԱՊՀ այլ երկրներ: Ի տարբերություն Հոգատար հայրերի, Հովանավորյալ միգրանտները հիմնականում ոչ թե Հայաստանի գյուղերի և փոքր քաղաքների բնակիչներ են, այլ մեծ քաղաքներից են՝ Երևանից և Գյումրիից: Այս խումբը մեկնելու դրդապատճառներով չի տարբերվում Հոգատար հայրերից, բայց նրանց աշխատանքի բնույթն ավելի բազմազան է: Նրանք, շինարարությունից բացի, աշխատում են նաև առևտրի և սպասարկման ոլորտներում: Կարելի է ասել, որ Ռուսաստանում ոչ շինարարությամբ զբաղվող միգրանտների մեծ մասը պատկանում է այս խմբին:

Հովանավորյալ միգրանտների կեցության կարգավիճակն ընդունող երկրում հիմնականում օրինական չէ, սակայն ի համեմատ Հոգատար հայրերի, այս միգրանտների կարգավիճակն ավելի է համապատասխանում իրավական նորմերին (օրինակ, Հովանավորյալ միգրանտները կարող են ունենալ գրանցում մի քանի ամիս, բայց հետո չերկարացնել այն, իսկ Հոգատար հայրերն ի սկզբանե կարող են չգրանցվել, կամ առաջինները կարող են ունենալ և՛ գրանցում, և՛ աշխատանքի թույլատվություն, իսկ երկրորդները՝ միայն գրանցում): Հովանավորյալ միգրանտները, ի տարբերություն Հոգատար հայրերի, ավելի բաց են նոր մշակույթի նկատմամբ և ավելի հեշտ ու արագ են սոցիալականացվում: Մա նախևառաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ Հովանավորյալ միգրանտներն ավելի շատ են դուրս գալիս փողոց՝ ավելի քիչ վախենալով ոստիկանությունից (որովհետև համեմատաբար ավելի օրինական են), երկրորդ, աշխատանքի բնույթից ելնելով, շփվում են տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ և երրորդ, նրանց այս հարցում ևս օգնում է բարեկամը, որը կարծես երկու մշակույթների հաշտեցմանը միջնորդ է հանդիսանում: Այս ամենն օգնում է այս խմբին ավելի հեշտ յուրացնել ընդունող երկրի մշակույթը, լեզուն, բարբերը, սրանով ինտեգրվելով ընդունող երկրի հասարակական կյանքին և տարիների ընթացքում դառնալով նրա մի

մասնիկը: Ինչ վերաբերում է ապահովվածության զգացումին, Մոսկվայում բնակվողների մեջ այն, այնուամենայնիվ, շատ թույլ է, թեև այս խմբի ներկայացուցիչները, Հոգատար հայերի համեմատ, իրենց ավելի պաշտպանված են զգում, որովհետև կա մեկը, ով նրանց աջակցում է:

Հովանավորյալ միգրանտների մի մասը, ամենայն հավանականությամբ, հետագայում կանկախանա իր բարեկամից՝ նրան ներդրություն չպատճառելու համար: Շատերն այն խմբից, որ Ռուսաստանում աշխատում է շինարարության ոլորտում հավանաբար կդառնան Հոգատար հայրեր, իսկ ավելի հաջողակ շինարարները և սպասարկման ոլորտում կամ առևտրում զբաղվածները ամենայն հավանականությամբ կհամալրեն «Ձուկը ջրում» միգրանտների խումբը, որը ներկայացված է հաջորդիվ:

«Ձուկը ջրում» միգրանտներ

«Ձուկը ջրում» միգրանտները նրանք են, ովքեր արդեն ունեն երկար տարիների միգրացիոն փորձ, և ընդունող երկրում իրենց զգում են շատ ապահով ու վստահ, ինչպես ձուկը ջրում: Նրանք հիմնականում երբեմնի Հովանավորյալ միգրանտներն են, ավելի հազվադեպ՝ նախկին Հոգատար հայրերը, որոնք լավագույնս հարմարվել են ընդունող երկրի բարքերին, ծանոթներ և մտերիմներ են ձեռք բերել, հիմնել են ամուր կապեր տեղացիների հետ ու տիրապետում են լեզվին: Այդ ինտեգրման և առաջին հերթին ծանոթների լայն շրջապատ ունենալու շնորհիվ նրանք կարողանում են ոչ միայն պաշտպանել իրենց շահերը, այլ նաև բանակցել և իրականացնել իրենց ծրագրերը: «Ձուկը ջրում» միգրանտներից շատերը ժամանակի ընթացքում ձեռք են բերում ընդունող երկրի քաղաքացիություն, ինչը նույնպես նպաստում է ավելի ինքնավստահ լինելուն: Այս ամենի շնորհիվ միգրանտների այս խումբն իրեն ավելի պաշտպանված է զգում, թեև Մոսկվայում բնակվողներն իրենց զգուշավորությունն այնուամենայնիվ պահպանում են: Անցումային խումբ լինելու պատճառով այս խումբը բավականին փոքր է, և նրա անդամներին համեմատաբար դժվար է հանդիպել, քանի որ, նախ, նրանք հիմնականում ապրում են ընդունող երկրում և երկրորդ՝ բավականին արագ ընտանիքով տեղափոխվում են ընդունող երկիր:

«Միրողական միգրանտներ»

Միրողական միգրանտների մեջ կարելի է առանձնացնել երեք հիմնական խումբ. 1. երիտասարդներ, որոնք ցանկանում են հեռանալ իրենց գյուղից կամ քաղաքից, 2. կանայք, որոնք մեկնել են արտերկիր իրենց հարազատներին այցելելու և այդ ընթացքում աշխատում են, 3. ուսանողներ, որոնք մեկնում են ԱՄՆ՝ արձակուրդների ընթացքում աշխատելու:

1. Կա երիտասարդ տղաների մի խումբ, որն ուզում է դուրս գալ իր գյուղից կամ քաղաքից, և մեկնել արտերկիր՝ պարզապես տեսնելու «դրսի

կյանքը»: Նրանք ֆինանսապես այնքան ապահովված չեն, որ կարողանան որպես զբոսաշրջիկ մեկնել որևէ երկիր, մյուս կողմից էլ գիտեն, որ իրենց հարազատները կամ հարևանները գնում են արտերկիր աշխատելու: Գյուղաբնակ և ֆինանսապես ավելի պակաս ապահովված երիտասարդները, որոնք ծանոթ են Ռուսաստանում աշխատողների օրինակին, Հայաստանից դուրս գալու ցանկությունը բավարարում են Ռուսաստան գնալով: Անշուշտ, իրենց մեկնումը նրանք ներկայացնում են նաև որպես գումար աշխատելու ձգտում, սակայն այս պարագայում աշխատանքային միգրացիան ավելի շուտ միջոց է իրենց գյուղից դուրս գալու, միջավայրը փոխելու և, վերջապես, Ռուսաստանի մասին լրածները սեփական աչքերով տեսնելու համար: Նրանք, որպես կանոն, մեկնում են կամ Հոգատար հայրերի շարքերում՝ բրիգադով, կամ գնում են այնտեղ արդեն աշխատող հոր կամ եղբոր մոտ: Այս երիտասարդների մեծ մասն ապրում է Հոգատար հայրերի կենցաղով, սակայն ավելի հետաքրքրասեր լինելով՝ ավելի շատ է շփվում տեղացիների հետ և երիտասարդ լինելով՝ ավելի հեշտ է հարմարվում նոր միջավայրին: Նրանք ավելի համարձակ են իրենց քայլերում, ավելի քիչ են զգում փող աշխատելու պատասխանատվությունը, քանի որ, ի տարբերություն Հոգատար հայրերի, ընտանիքի կարիքները հոգալու անհետաձգելի պարտավորություն չեն ունենում: Ամենայն հավանականությամբ այս միգրանտների մի մասը երկրորդ անգամ աշխատանքային միգրացիայի չի դիմի, եթե իհարկե կարճ ժամանակում մեծ գումար աշխատելու կարիք չլինի:

2. Միրողական միգրանտների թվին են պատկանում նաև միգրանտ կանանցից շատերը: Նրանք, որպես կանոն, աշխատում են արտերկրում, երբ գնում են իրենց՝ արտերկրում աշխատող ընտանիքի անդամին կամ արտերկրում ապրող ազգականին տեսակցության: Կարելի է ասել, որ նրանք պարզապես աշխատում են, որովհետև չեն ուզում կորցնել լրացուցիչ գումար վաստակելու հնարավորությունը, կամ աշխատում են տեսակցության համար գնված տոմսի գումարը վերադարձնելու համար: Իրենց կյանքի պայմաններով և կենսակերպով այս կանայք նմանվում են Հովանավորյալ միգրանտներին:
3. Միրողական միգրանտների թվում են նաև այն ուսանողները, ովքեր արձակուրդներին միջնորդ կազմակերպությունների միջոցով մեկնում են ԱՄՆ՝ աշխատելու: Այստեղ ևս ավելի շուտ կարելի է խոսել հետաքրքրասիրության, քան գումար վաստակելու խիստ կարիքի մասին: Այս երիտասարդները տիրապետում են անգլերենին կամ աշխատելու ընթացքում շատ արագ զարգացնում են իրենց լեզվական հմտությունները: Սա, այլ հանգամանքների շարքում, լավագույնս նպաստում է նրան, որ Միրողական միգրանտների այս խումբը հեշտությամբ հարմարվի Միացիալ Նահանգների կյանքին: Ինտենսիվորեն աշխատելու հետ մեկտեղ, այս երիտասարդներն ակտիվորեն շփվում են տարբեր մարդկանց հետ, հետաքրքիր ժամանակ

անցկացնում, զվարճանում: Նրանք վերադառնում են Հայաստան ոչ միայն զգալի գումար վաստակած, այլ նաև ԱՄՆ-ի մասին լավ հուշերով և անհամբեր սպասում են մյուս արձակուրդներին՝ մեկնելու մյուս հնարավորությանը: Անշուշտ սա չի նշանակում, որ նրանք անպայմանորեն կմեկնեն նաև մյուս տարի: Այս խումբը համալրում է այն փոքրաթիվ միգրանտների շարքերը, որոնք հայրենիք վերադառնալիս վերահաստատվելու և վերաինտեգրվելու բարդություն են ունենում: Նրանք, որպես կանոն, վերադարձի առաջին շրջանում անընդհատ մտածում են կրկին մեկնելու մասին, փնտրում են մեկնելու տարբեր ուղիներ, և դրանք գտնելու դեպքում անպայման մեկնում են: Այս երևույթն էլ ավելի է ընդգծվում ներկայացվելիք հաջորդ խմբում:

«Երջանիկ միգրանտներ»

Երջանիկ միգրանտները երիտասարդ (թե՛ կին և թե՛ տղամարդ) մասնագետներ են, որոնք արտերկրից հրավիրվել են իրենց մասնագիտությամբ աշխատելու: Նրանք իրենց մասնագիտությամբ աշխատում են նաև Հայաստանում, և նրանց մեկնելու հիմնական նպատակը լինում է մասնագիտության մեջ կատարելագործվելը: Թեև նրանք նշում են, որ արտերկրում ավելի շատ են վարձատրվել, այդուհանդերձ, նրանց մեկնելու հիմնական դրդապատճառը գումար վաստակելը չի լինում: Երջանիկ միգրանտները հիմնականում մեկնում են ԵՄ տարբեր երկրներ: Արտերկրում աշխատելու ընթացքում իրենց շատ լավ են զգում և միշտ հաճելի զգացմունքներով են պատմում այդ ուղևորության մասին: Նրանք ունենում են օրինական կարգավիճակ և գործատուի հետ պայմանագիր: Երջանիկ միգրանտները գոհ են լինում թե՛ աշխատանքային հարաբերություններից, թե՛ մասնագիտական աճի հնարավորություններից, թե՛ աշխատանքային պայմաններից և թե՛ կենցաղային պայմաններից: Այս ամենը, նրանց ներկայացմամբ, անհամեմատ ավելի լավ էր ընդունող երկրում, քան Հայաստանում: Որպես մասնագետ իրացվելու հնարավորությունից զատ, Երջանիկ միգրանտներին ոգևորում և ուրախացնում է այն, որ այնտեղ իրենք իրենց գնահատված են զգացել: Արտերկրում աշխատանքն էապես բարձրացնում է այս մասնագետների սրբունակությունը Հայաստանի (ինչ-որ չափով նաև արտերկրի) աշխատանքային շուկայում, ինչպես նաև նրանց օգնում է ինքնահաստատվել որպես մասնագետ: Այս խումբը, վերադառնալով Հայաստան, բոլորից առավել, վերահաստատվելու խնդիր է ունենում: Այն դժվարությամբ է հարմարվում ոչ միայն Հայաստանի կյանքի ռիթմին և վիճակին, այլ նաև մասնագիտական գործունեության սահմանափակ և հաճախ ոչ առաջադիմական տեխնիկական և աշխատանքային պայմաններին: Կարելի է համոզված լինել, որ Երջանիկ միգրանտների մեծամասնությունը բաց չի թողնի արտերկրում աշխատելու առիթը, ավելին, ամեն կերպ կփորձի ստեղծել այն, մեկնել արտերկիր, և, ինչու չէ, նաև հաստատվել այնտեղ: Հենց Երջանիկ միգրանտներն են կազմում Հայաստանից ուղեղների արտախոսքին նպաստող խումբը:

Աշխատանքի նպատակով արտերկիր մեկնելու որոշման մասին խոսելիս անհրաժեշտ է հստակ տարբերակել մեկնելու պատճառները և այն գործոնները, որոնք դրդում են մարդկանց կոնկրետ աշխատանքային ուղևորության որոշում կայացնել:

Աշխատանքային էմիգրացիայի պատճառները

Հարցազրույցների հիման վրա կարելի է տարբերակել Հայաստանից աշխատանքային էմիգրացիայի երեք հիմնական պատճառներ.

- աշխատանքի բացակայությունը,
- «խոսպան գնալու» ավանդույթը,
- գյուղից հեռանալու ձգտումը:

Աշխատանքի բացակայություն

Նախևառաջ, կարևոր ենք համարում նշել, որ բավականին դժվար է գնահատել, թե ինչ է նշանակում «աշխատանքի բացակայություն», քանի որ հարցվողների մոտեցումները այս հարցին տարբեր են: Նրանց մի մասը, ասելով, թե աշխատանք չկա, նկատի է ունենում ցանկացած տիպի աշխատանքի բացակայություն, իսկ մի մասը՝ կայուն և բավարար վարձատրվող:

Գյուղում վարսավիր էի, բայց դա ձեռնտու չէր, քանի որ գյուղում շատերը բարեկամ են կամ մտերիմ, և շատերից չի ստացվում փող վերցնել: Մտածեցի, որ կգնամ, փող կաշխատեմ, մարզկենտրոնում վարսավիրանոց կբացեմ:
Արսեն, 28տ., գ. Արփի

Այսպիսով, թեև կան մեծ թվով միգրանտներ, որոնք մասնավորեցնում և նշում են, որ իրենց մեկնելու պատճառը բավարար վարձատրվող

աշխատանքի բացակայությունն է, այնուամենայնիվ քիչ չեն նաև նրանք, ովքեր, որպես էմիգրացիայի պատճառ, նշում են աշխատանքի բացակայությունն ընդհանրապես: Այն միգրանտները, ովքեր

Մեկնելուց առաջ այստեղ աշխատել եմ և հիմա էլ աշխատում եմ: Մեր տան կողքին ունեմ ավտոտեխսպասարկման կետ: Պարզապես իրենց հետ երբ խոսեցի, ասացին, որ լավ աշխատելու դեպքում ամսական 3000 դոլար կարող եմ վաստակել: Ես էլ տան խնդիր ունեմ լուծելու և մտածեցի՝ իսկ ինչու չգնալ: Այստեղի գործից չեմ բողոքում, բայց այդ կարգի գումար չեմ վաստակում:
Արարատ, 33տ., ք. Երևան

առաջին անգամ մեկ-մեկ են 1990-ական թվականներին, ասում են, որ մեկնել են, որովհետև չեն կարողացել Հայաստանում աշխատանք գտնել, իսկ 2000-ից հետո մեկնածներն ավելի շատ դժգոհում են բարձր վարձատրվող աշխատանքի բացակայությունից: Շատերը ոչ միայն չեն դժգոհում աշխատանքի բացակայությունից, նրանք ոչ միայն գտնում են, որ այսօր Հայաստանում կարող են աշխատանք գտնել (իհարկե ոչ այն վարձատրությամբ, որն իրենք նույն գործի համար կարող են ստանալ արտերկրում), այլ նաև աշխատում են Հայաստանում կամ աշխատել են մինչև մեկնելը: Հետաքրքիր է, որ կան միգրանտներ, որոնք Հայաստանում ունեն մշտական աշխատանք և ամեն տարի, արտագնա աշխատանքների մեկնելու նպատակով, Հայաստանի իրենց աշխատավայրում արձակուրդ են ձևակերպում, մեկնում են աշխատելու մի քանի ամսով, այնուհետև կրկին վերադառնում են:

«Նոսպան գնալու» ավանդույթ

Հայաստանի գյուղական բնակչության շրջանում միգրանտների հետ հարցումները մի հետաքրքիր փաստի մասին են վկայում: Այն գյուղերում, որտեղ երկար տարիներ բազմաթիվ ընտանիքներից տղամարդիկ գնում են արտագնա աշխատանքների, և «խոսքան գնալը» կարծես դարձել է ընտանիք պահելու ավանդական ձև, երիտասարդ տղաներն իրենց կյանքի որոշակի փուլում գնում են այդ ընդունված ուղիով: Այդ փուլը, որպես կանոն, լինում է բանակում ծառայելուց հետո, երբ տղան արդեն պետք է մտածի գումար վաստակելու և ընտանիք կազմելու մասին: Ահա այս երիտասարդները, կարելի է ասել, առանձնապես «դետուդեն» չեն ընկնում Հայաստանում աշխատանք գտնելու համար, այլ պարզապես մեկնում են արտերկիր, ինչպես դա արել է իր հայրը կամ հորեղբայրը: Այս պարագայում միգրացիայի առաջնային պատճառ, կարելի է ասել, ձևավորված ավանդույթն է, այդ ավանդույթի ինտերցիոն ուժը:

Գավառի մեծամասնությունը գնում է Ռուսաստան աշխատելու: Իմ ընկերն էլ էր գնում: Ես էլ որոշեցի գնալ:

Վաչե, 25տ., ք. Գավառ

Գյուղից հեռանալու ճգնում

Այս պատճառը համեմատաբար քիչ է տարածված և դրան առավել հակված են երիտասարդները: Կան երիտասարդներ, ովքեր ցանկանում են մշակութային և հասարակական ավելի ակտիվ միջավայրում ապրել, քան իրենց գյուղն է: Նրանք հաճախ փորձում են հաստատվել մարզկենտրոններում կամ Երևանում: Այս երիտասարդների մեջ հաճախ լինում են շատ պրպտունները, ովքեր տարբեր

Գյուղում չեն սիրում ապրել, եթե գործ էլ լիներ, չէի մնա:

Ներսես, 28տ., գ. Ուռուտ

աշխատանքներ են փորձում կատարել թե՛ մարզկենտրոններում, թե՛ Երևանում, սակայն որոշ ժամանակ անց հասկանում են, որ չեն կարող Երևանում, այդ թվում նաև մարզկենտրոնում, վաստակել այնքան, որ բավականացնի բնակարան վարձելուն, կենցաղային կարիքները հոգալուն: Այս պարագայում է, որ գյուղից դուրս գալու այլընտրանքային և ավելի իրագործելի միջոց է դառնում Ռուսաստան մեկնելը: Քանի որ նախ, այնտեղ ապրելու տեղ և սնունդ ապահովելու հնարավոր ձևերը մշակված են տարիներով և երկրորդ, այնտեղ աշխատելով հնարավոր կլինի նաև գումար կուտակել:

Արտերկիր մեկնելու որոշումը խթանող գործոններ

Աշխատելու նպատակով արտերկիր մեկնելու որոշման վրա ազդում են հետևյալ երեք հիմնական գործոնները.

- մեծ ծախս հոգալու անհրաժեշտություն
- լրացուցիչ գումար վաստակելու հնարավորություն
- արտերկրում աշխատանքի առաջարկ

Մեծ ծախս հոգալու անհրաժեշտություն

Հաճախ մարդիկ արտերկիր մեկնելու որոշում են կայացնում այն ժամանակ, երբ ընտանեկան բյուջեում լրացուցիչ մեծ ծախս հոգալու անհրաժեշտություն է առաջանում: Կան մարդիկ, ովքեր աշխատում են Հայաստանում և կարողանում են Հայաստանում հոգալ իրենց ընթացիկ ծախսերը, սակայն երբ դրանց ավելանում են նոր և մեծ ծախսեր, մարդիկ այլ ելք չեն տեսնում, քան արտերկիր մեկնելը: Նման մեծ ծախսերը սովորաբար կապված են լինում երեխաների՝ բուհ ընդունվելու հետ: ԽՏՆ-ի է առաջանում ոչ միայն ուսման վարձը վճարելու, այլ նաև ընդունվող երեխաների համար ուսուցիչ վարձելու և հոգալու այն ուսանողների կենցաղը, ովքեր սովորելու են մեկնել այլ քաղաք: Լրացուցիչ ծախս է առաջանում նաև, երբ ընտանիքի անդամներից մեկը մտադրվում է ամուսնանալ, բնակարան գնել կամ նորոգել, սեփական գործը հիմնել և այլն:

Լրացուցիչ գումար վաստակելու հնարավորություն

Սա վերաբերում է հիմնականում սիրողական միգրանտների խմբերից մեկին՝ այն կանանց, ովքեր հարազատին տեսակցելու նպատակով մեկնել են արտերկիր և օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ որոշել են աշխատել: Անշուշտ սա չի դրդում անձին Հայաստանից աշխատանքի նպատակով արտերկիր մեկնելու որոշում կայացնել, սակայն խթանում է նրան աշխատել՝ արտերկրում գտնվելու ընթացքում:

Արտերկրում աշխատանքի առաջարկ

Շատ կարևոր և հետաքրքիր հանգամանք է այն, որ արտերկրում աշխատելու առաջարկն ինքնին կարող է ստեղծել մեկնելու մտադրություն և դրդել մարդուն՝ մեկնել աշխատելու: Սա սովորաբար տեղի է ունենում այն դեպքերում, երբ գյուղերում բրիգադ է կազմվում՝ Ռուսաստանում շինարարական աշխատանքներ կատարելու համար: Մարդիկ, ովքեր նույնիսկ Հայաստանում աշխատանք ունեն, բայց լսում են, որ կարող են կարճ ժամանակում Ռուսաստանում համեմատաբար մեծ գումար վաստակել, մտածում են. «Իսկ ինչո՞ւ ոչ»: Արդյունքում ստացվում է, որ լինում են դեպքեր, երբ առաջարկն ինքնին պահանջարկ և մտադրություն է ստեղծում:

Բացի նշված հիմնական գործոններից, որոնք, որպես կանոն, գործում են Ռուսաստան մեկնողների պարագայում, կան նաև ավելի պակաս տարածվածները: Դրանցից են, օրինակ, հաստիքների կրճատման պատճառով աշխատանքից զրկվելը, կամ օտար մշակույթի նկատմամբ հետաքրքրասիրությունը Ռուսաստան և ԱՄՆ մեկնող երիտասարդ Սիրողական միգրանտների պարագայում, ինչպես նաև մասնագիտական զարգացումը՝ ԵՄ երկրներ մեկնող Երջանիկ միգրանտների համար և այլն:

Աշխատանքային էմիգրացիայի հիմնական պատճառներից ու որոշում կայացնելու վրա ազդող նշված գործոններից բացի, որպես կանոն, ի օգուտ մեկնելու են միշտ խոսում միգրանտների հետևյալ օբյեկտիվ համոզմունքները.

- աշխատանքային միգրացիան հնարավորություն է տալիս համեմատաբար կարճ ժամանակում համեմատաբար մեծ գումար վաստակել,
- թեև յուրաքանչյուր պոտենցիալ միգրանտ իր աչքի առջև ունի արտերկրում աշխատելու ոչ փոքրաթիվ անհաջող պատմություններ, այնուամենայնիվ նրա շրջապատում ավելի շատ են «հաջողակ» միգրանտները:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՄԵԿՆՈՒՄ

Արտագնա աշխատանքների մեկնումը և դրա հետ կապված հարցերն ու մանրամասները նկարագրելիս կարելի է առանձնացնել 3 հիմնական դեպք.

- մեկնում ծանոթի մոտ,
- մեկնում բրիգադով,
- մեկնում հրավերով:

Մեկնում ծանոթի մոտ

Հայաստանից արտերկիր մեկնած աշխատանքային միգրանտների մի մասը գնում է այնտեղ գտնվող Ծանոթի² մոտ: Վերջինները լինում են կամ 1. ազգականներ, ընկերներ կամ մտերիմներ, որոնք հաստատվել են ընդունող երկրում և այնտեղ են ապրում կամ 2. աշխատանքային միգրանտներ, որոնք արդեն ունեն աշխատանքային միգրացիայի փորձ և այդ պահին աշխատում են ընդունող երկրում:

Ծանոթի մոտ մեկնելու պարագայում, Հայաստանում ընդունված է ասել. «Ինձ կանչել են»: Սանձանակում է, որ Ծանոթը պատրաստակամություն է հայտնել օգնելու

միգրանտին, մինչև նա կկարողանա հաստատվել: Իսկ ավելի հաճախ միգրանտը, որոշելով մեկնել արտերկիր աշխատելու, դիմում է իր Ծանոթին, որպեսզի վերջինն օգնի իրեն: Շատ հետաքրքիր է նաև, որ երբեմն, արտերկրում հաստատված Ծանոթի գոյությունն ինքնին կարող է միգրացիայի մտադրության առաջացման խթան դառնալ:

Ծանոթների առաջին խումբը (ազգականներ, ընկերներ կամ մտերիմներ, որոնք հաստատվել են ընդունող երկրում և այնտեղ են ապրում) սովորաբար խոստանում են օգնել միգրանտին աշխատանք գտնելու հարցում, միգրանտը նախնական շրջանում ապրում է նրանց տանը (այսինքն՝ Ծանոթը հոգում է կացարանի և սննդի հարցերը): Նրանք, ովքեր մեկնում են այս ծանոթների մոտ նախապես, կարելի է ասել, տեղյակ չեն, այն մասին, թե ինչ է իրենց սպասվում: Նրանք պարզապես գիտեն, որ ընդունող երկրում «մարդ ունեն»: Այս Ծանոթների մոտ գնացող միգրանտների մեջ կան այնպիսիք, ովքեր զնացել են՝ որպես երաշխիք ունենալով միայն այն, որ Ծանոթն ասել է. «Արի, լավ կլինի»: Նշենք նաև, որ Ծանոթների այս խումբը կարող է լինել աշխարհի որևէ երկրում:

Ծանոթների երկրորդ խումբը (աշխատանքային միգրանտներ, ովքեր արդեն ունեն աշխատանքային միգրացիայի փորձ և այդ պահին աշխատում են ընդունող երկրում) որպես կանոն, կազմում են Հոգատար հայրերը, ովքեր, ինչպես նշվեց, հիմնականում աշխատում են Ռուսաստանում, շինարարության ոլորտում, ապրում են այնտեղ, որտեղ աշխատում են, ուստի

Ձանգեցի ռուս ընկերոջս, ասացի, որ ուզում եմ գնալ: Նա ասաց, որ եթե գնամ, մի բան կանեն: Հենց հասա, հաջորդ օրը զնացինք իրենց շենքի կողքի «ժեկ»-ը: Այնտեղ ասացին, որ խառատի գործ կա: Սկսեցի գործ անել, հետո դարձա բրիգադիր. հիմա մի քանի հոգու տանում եմ Ռուսաստան, բայց ինքս էլ եմ աշխատում, այլապես փողը քիչ կլինի:

Արմեն, 59տ., ք. Երեզնածոր

² Ծանոթը գրված է մեծատառով, պայմանականորեն նշելու համար այն մարդուն, որը միջնորդի ուրույն դեր է ստանձնում և օգնում է միգրանտին գտնել աշխատանք և հաստատվել ընդունող երկրում: Այսուհետ, տեքստում մեծատառով գրված «Ծանոթ» հասկացությունը մատնանշում է հենց այս մարդկանց:

նրանց օգնությունը միգրանտին, պարզապես լինում է այն, որ նրանք աշխատանք փնտրում թե՛ իրենց և թե՛ միգրանտի համար: Նրանք երկուսով աշխատում և ապրում են նույն պայմաններում: Այս խմբի Ծանոթների մոտ մեկնողներն ավելի մանրամասն են տեղեկանում իրենց սպասող պայմանների մասին, գրեթե այնպես, ինչպես, նրանք ուզեք մեկնում են բրիգադով:

Թեև Ծանոթի մոտ մեկնողների մեկնելու հիմնական առանձնահատկությունները նույնն են, այնուամենայնիվ իրենց հետագա կեցությամբ միգրանտները տարբերվում են, կախված այն բանից, թե Ծանոթների որ խմբի մոտ են մեկնել: Ծանոթների առաջին խմբի մոտ մեկնողները արտերկրում իրենց կեցությամբ հիմնականում լինում են Հովանավորյալ միգրանտներ, իսկ երկրորդ խմբի մոտ մեկնածները՝ Հոգատար հայրեր:

Մեկնում բրիգադով

Մեկնելու երկրորդ սցենարը փոքր-ինչ ավելի կանոնակարգված բնույթ է կրում և վերաբերում է Ռուսաստան մեկնողներից շատերին: Հայերը, որոնք Ռուսաստանի աշխատանքային շուկայում ավելի հաստատված են լինում և, որպես բրիգադի կազմակերպում և համակարգում են շինարարական աշխատանքները, հակված են շինարարական բրիգադները ձևավորելու իրենց հայենակիցներից, իսկ ավելի հաճախ՝ համագյուղացիներից: Այն դեպքում, եթե նախատեսվող բրիգադը պետք է մեծ լինի, այն կարող է ընդգրկել նաև հարևան գյուղի բնակիչներին:

Սովորաբար բրիգադը կազմվում է հետևյալ կերպ. բրիգադիորդ որևէ ոչ ֆորմալ, բայց փորձված ճանապարհով գյուղում տարածում է լուրը, որ իրեն վարպետներ և/կամ բանվորներ են պետք: Հետաքրքրվողները գտնում են բրիգադիորդին, ճշտում են պայմանները և նրանք, ովքեր համաձայնում են պայմաններին, կազմում են բրիգադը և մեկնում բրիգադի կազմում: Աշխատանքի մեկնելու այս եղանակը հիմնականում գործում է երկրորդ ուղևորությունից սկսած, քանի որ լուրերը հիմնականում տարածվում են միգրացիայի փորձ ունեցող անձանց շրջանում:

Այնտեղ աշխատանք գտնելը շատ հեշտ է: Հենց Հայաստանում մարդիկ իրենք են քեզ գտնում: Ինչ-որ խառնուրդ կամ խաչմերուկում հավաքվածների մեջ ասում են, և դա տարածվում է:

Մենուա, 41տ., ք.Եղեգնաձոր

Հավանաբար բրիգադի ձևավորման և տեղեկատվության տարածման այս ձևով պայմանավորված, բրիգադով մեկնողները հիմնականում լինում են գյուղական բնակչությունից, կամ Հայաստանի փոքր քաղաքներից: Սա բացա-տրվում է այն սոցիալական օրինաչափությամբ, որ փոքր համայնքներում՝ գյուղերում, ոչ ֆորմալ եղանակով տարածվող լուրն ավելի

արագ և ավելի շատ մարդկանց շրջանում է տարածվում, քան մեծ քաղաքներում:

Շատ հետաքրքիր հարց է նաև բրիգադի ղեկի գնահատումը: Նա, որպես կանոն, միջնորդ է աշխատանք գտնելու հարցում, սակայն միգրանտը նրան երբեմն դիտում է որպես գործատու, քանի որ հաճախ իրենք վարձատրվում են

Այնտեղ աշխատանք գտնելը շատ հեշտ է: Դու կարող է մի գործ անես, ինչ-որ մեկը, որը մոտակայքում ինչ-որ բան է կառուցում, գա ու ասի՝ դա որ վերջացնեք, կգա՞ք սա էլ ավարտեք:

Նարեկ, 24տ., գ. Արփի

հենց նրա կողմից և տեղյակ չեն, թե ով է իրական գործատուն: Միջնորդի և գործատուի դերերի այս անհստակությունը հատկապես զգալի է այն դեպքում, երբ այդ անձն անձանոթ է (հաճախ այսպես է լինում,

երբ միգրանտն աշխատանքը գտնում է Ռուսաստանում և անձամբ չի ճանաչում միջնորդին, որը միգրանտի նկատմամբ, կարելի է ասել, գործատուի դեր է կատարում):

Նկատենք, որ լինում են դեպքեր, երբ բրիգադիքը հոգում է նաև միգրանտի մեկնելու ծախսերը: Ընդ որում, պայմանավորվածությունը կարող է տարբեր լինել. մի դեպքում բրիգադիքը կարող է տոմսի վրա ծախսված գումարը պահել աշխատավարձից, իսկ մեկ այլ դեպքում՝ ոչ: Սրանք, սակայն եզակի դեպքեր են: Որպես կանոն միգրանտները պայմանավորվածություն են ունենում աշխատանքի բնույթի, աշխատավարձի, մնալու տեղի և սննդի մասին:

Եթե բրիգադով մեկնած միգրանտները, ժամանելուց հետո չեն հրաժարվում պայմանավորված աշխատանքից, նրանք համալրում են Հոգատար հայրերի շարքերը:

Կարևոր է նշել նաև, որ, թեև մեկնելու նկարագրված երկու եղանակն էլ (մեկնում Շանոթի մոտ և մեկնում բրիգադով) մեկնողին չեն ապահովագրում անհաջողությունից և խաբված լինելուց, սակայն ռիսկերն ամենամեծն են Շանոթների երկրորդ խմբի մոտ մեկնողների (աշխատանքային միգրանտներ, որոնք արդեն ունեն աշխատանքային միգրացիայի փորձ և այդ պահին աշխատում են ընդունող երկրում) և բրիգադով մեկնողների պարագայում: Սա նախևառաջ պայմանավորված է նրանով, որ, թեև այս միգրանտներն ավելի մանրամասն են ճշտում իրենց աշխատանքային պայմանները, նրանք այնուամենայնիվ չեն կնքում գրավոր պայմանագրեր և ստիպված են լինում պարզապես վստահել, հաճախ գրեթե անձանոթ մարդկանց:

Մեկնում հրավերով

Սա արտերկրում աշխատելու ամենաապահով ձևն է, որի դեպքում միգրանտը ընդունող երկրի կազմակերպությունից աշխատանքի հրավեր է ստանում, կամ միջնորդ կազակերպության միջոցով, նախքան մեկնելը, աշխատանք է գտած լինում: Այստեղ խոսքը Երջանիկ միգրանտների մասին է, ովքեր իրենց մասնագիտությամբ աշխատելու են մեկնում, հիմնականում ԵՄ երկրներ, և այն Սիբրոդական միգրանտների, որոնք միջնորդ կազմակերպության միջոցով մեկնում են ԱՄՆ (ավելի հազվադեպ նաև ԵՄ երկրներ)՝ աշխատելու:

Մեկնելու այս եղանակն ամենաֆորմալ և, ուստի, ռիսկերից և ճախողումներից ամենաապահովագրված եղանակն է: Այս դեպքում մեկնողներն ունենում են գրավոր պայմանագրեր, որոնցով համաձայնություն են կնքում ուղևորության և ընդունող երկրում իրենց աշխատանքի ու կեցության պայմանների վերաբերյալ և բավականին տեղեկացված են լինում իրենց իրավունքներին և պարտականություններին: Այս եղանակով մեկնում է միգրանտների փոքրամասնությունը:

...Հերթական նամակն ստացա, որում առաջարկություն կար մեկնել Վիեննա աշխատելու: Դա իմ երջանիկ օրերից մեկն էր: ...Բավականին շատ փաստաթղթեր էի հավաքել մինչև դեսպանատուն մտնելը. ծնողներիս համաձայնություն, աշխատավայրից երաշխավորագիր, ամբողջ հրավերի փաթեթը, որն ստացել էի Ավստրիայից:

Անահիտ 28տ, Երևան

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՊՐՈՒՄ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Աշխատանքի բնույթը

Ինչպես կարելի էր համոզվել քանակական հետազոտության արդյունքներից, միգրանտների մեծամասնությունն աշխատում է շինարարության ոլորտում՝ Ռուսաստանում: Նրանք կառուցում են թե՛ բնակելի տներ կամ առանձնատներ, և թե՛ մասնավոր ու հանրային, բնակելի ու ոչ բնակելի շենքեր: Հայ միգրանտները Ռուսաստանի շինարարության ոլորտում պահանջված են թե՛ շինությունները կառուցելու և թե՛ դրանց ներքին հարդարանքի և նորոգման գործում:

Ինչպես և պետք էր ակնկալել, նրանք, ովքեր մեկնել են բարեկամի մոտ՝ Հովանավորյալ միգրանտները, ավելի բազմազան գործունեությամբ են զբաղվում: Սա շատ օրինաչափ է, քանի որ աշխատանքի մասին տեղեկատվությունը փնտրում և գտնում են իրենց բարեկամների և մտերիմների, ինչպես նաև նրանց ծանոթների շրջանում, կամ աշխատում են հենց նրանց հիմնած ձեռնարկություններում: Հովանավորյալ միգրանտները զբաղվում են առևտրով, աշխատում են հանրային սննդի օբյեկտներում որպես խոհարարներ, հատկապես պահանջված են արևելյան ուտեստներ

պատրաստողները (խո-րոված, քյաբար և այլն): Կանայք ներգրավվում են սննդի արտադրության մեջ՝ աշխատում են որպես հացթուփաներ և հրուշակագործներ: Միրողական կին միգրանտներից ունանք տնային

Կյանքը, ընտանիքը, երեխաներդ ստիպում են, որ ցանկացած միջոցի էլ դիմես: Մոսկվայում եղել է մի պահ, որ բանվորություն են արել: Բայց դրա մասին ոչ ոք չգիտի: Իհարկե այստեղ չես կարող մնան բան անել, որովհետև այստեղ ունես ծնող, եղբայրներ, որոնք կգերադասեն, որ տանը նստես, քան այդպիսի գործ ասնես:

Վահան, 35տ., ք. Գավառ

պայմաններում պատրաստում են խմորեղեն (հազվադեպ նաև այլ ուտեստներ) և հանձնում խանութներին և սրճարաններին: Սա հիմնականում լինում է Ռուսաստանում: Ռուսաստանից դուրս կին միգրանտները հիմնականում աշխատում են որպես դայակներ, ծերեր կամ հիվանդներ խնամողներ և հավաքարարներ: Փոքրաթիվ միգրանտներ աշխատում են նաև որպես էլեկտրիկներ, ավտոմեխանիկներ, կահույքագործներ, կոշակարներ, վարորդներ, կամ զբաղված են գյուղատնտեսության ոլորտում:

Իրենց մասնագիտությամբ աշխատում են որպես կանոն Երջանիկ միգրանտները:

Աշխատանքային պայմանագիր

Բացառությամբ Երջանիկ միգրանտների, մյուս միգրանտների ճնշող մեծամասնությունը չի ունենում աշխատանքային պայմանագիր: Իրավական տեսանկյունից, նրանք չեն կնքում պայմանագիր, որովհետև, որպես կանոն,

Գրավոր պայմանագիր չկար, որովհետև ճանաչում էի այդ մարդուն: Հիմա ո՞վ է գրավոր պայմանագիր կնքում: Միայն մի անգամ են գրավոր պայմանագիր կնքել, քանի որ չէի վստահում, բայց հենց նա էլ փողի մի մասը չի տվել:

Նարեկ, 24տ., գ. Արփի

Իմ եղբոր ընկերը գտավ մեզ համար այդ աշխատանքը: Գնացինք, խոսեցինք, պայմանավորվեցինք, մեր միջև բարիդրացիական հարաբերություններ ստեղծվեցին: Դրանից հետո ամոթ էլ էր պայմանագրի մասին խոսել:

Գուրգեն, 48տ., ք. Գավառ

չեն ունենում աշխատելու իրավունք: Սակայն վերլուծության այս հատվածում կանգ կառնենք հարցի ոչ թե իրավաբանական այլ մշակութային և հոգեբանական կողմի վրա:

Միգրանտների մեծամասնությունն ասում է, որ կարիք չի եղել պայմանագիր կնքելու, քանի որ կողմերը միմյանց վստահել են: Կան նաև մարդիկ, ովքեր նշում են, թե

բանավոր պայմանավորվածությունն իրենց համար շատ ավելի մեծ ուժ ունի, քան գրավորը: Նրանք կարծես առավել վստահում են ասված, քան գրված

խոսքին: Կան նաև միգրանտներ, ովքեր տարակուսանքով նշում, թե պայմանագիր կնքելն ընդունված չէ, ինչի պատճառով իրենք չեն էլ մտածել այդ մասին:

Իհարկե, կան նաև այնպիսիք, որ այն տեսակետն ունեն, թե պայմանագիր չկնքելը ֆինանսական տեսակետից ձեռնադր է թե՛ գործատուին և թե՛ միգրանտին:

Աշխատանքային պայմանները

Կան որոշակի դրույթներ, որոնք, որպես կանոն, բանավոր պայմանավորվածության ընթացքում ճշտվում են: Այստեղ կանգ առնենք շինարարության ոլորտում աշխատանքային պայմանավորվածությունների վրա, որովհետև սա է միգրանտների ճնշող մեծամասնության զբաղվածության ոլորտը:

Միգրանտին հետաքրքրող հիմնական պայմաններն են աշխատավարձը, մնալու տեղը և սնունդը:

Աշխատավարձ

Բնականաբար միգրանտների մեծամասնությանն ամենից հաճախ հետաքրքրում է աշխատավարձը: Շինարարության ոլորտում հաճախ միգրանտը վարձատրվում է ոչ թե ամսավճարով, այլ գործարքային սկզբունքով՝ կատարված աշխատանքի ծավալով: Այս է պատճառը, որ շինարար միգրանտների մեծամասնությանը չի հետաքրքրում հանգստյան օրերի առկայությունը և աշխատաժամերի քանակը: Նրանք շահագրգռված են օրվա մեջ երկար աշխատել, որպեսզի շատ գործ անեն և տանից հնարավորինս քիչ բացակայելով, հնարավորինս շատ գումար վաստակեն: Միգրանտները

Պայմանավորվել էինք գումարի հարցով, հետո, Աստված ոչ անի, եթե հիվանդացար, քո հիվանդության ծախսերն ամբողջությամբ ֆիրման է անում: Եթե դու քրեական ոչ մի խախտում չես արել, բայց ոստիկանությունը տարավ, այդ ծախսերն էլի ֆիրման է անում:

Մերոք, 52տ., գ. Փարսաբար

Նախօրոք գիտեի, որտեղ ապրելու եմ, շատ վատ պայմաններ են, գոմ էր, բայց, քանի որ լավ էին վարձատրում, համաձայնեցի:

Վարդան, 56տ., գ. Այգեստան

պայմանավորվածություն են ձեռք բերում նաև այն մասին, թե երբ են ստանալու աշխատավարձը և ինչ պարբերականությամբ:

Մնալու տեղ և սնունդ

Սա հիմնականում հետաքրքրում է Հոգատար հայրերին, ովքեր Ռուսաստանում, որպես կանոն, կացարան չեն ունենում: Ընդ որում, միգրանտների համար հաճախ որոշիչ է լինում միայն այն, թե արդյոք գործատուն դա տրամադրում է, թե՛ ոչ: Միգրանտները հաճախ չեն պարզում, ո՛չ կացարանային պայմանները, ո՛չ էլ սննդի որակը, քանի որ առանձնապես լավ պայմաններ չեն ակնկալում: Հիմնականում այն

Երբ այստեղից գնում ես, տրամադրվում էս ամենավատին: Երբեմն ստիպված ես 10 օր չլողանալ:

Սահակ, 35տ., գ. Մուսալեռ

միգրանտները, ովքեր զբաղվում են տների ներքին հարդարանքով և նորոգմամբ գիշերում են այնտեղ, որտեղ և աշխատում են, իսկ այն դեպքում, եթե միգրանտը զբաղված է շինության կա-

ռուցման գործում, գործատուն որևէ կացարան է տրամադրում: Կախված շինարարության ծավալներից և ներգրավված իմիգրանտների թվից, գործատուի առաջարկած կացարանային պայմանները կարող են տարբեր լինել, սկսած մի քանի հոգու համար տրամադրված փոքր սենյակից մինչև հանրակացարանը: Բնականաբար, կախված այն քանից, թե ով է հոգում կացարանի և սննդի խնդիրը, աշխատավարձի չափը տարբեր է լինում:

Այլ պայմանավորվածություններ

Մասնավոր դեպքերում, գործատուն կարող է երաշխավորել, թե կյուծի գրանցման և միգրանտի կեցության հետ կապված հարցերը, որը, որպես կանոն, արվում է անօրինական ճանապարհով: Երբեմն միգրանտներն ու գործատուն հատուկ պայմանավորվում են մաս աշխատանքի որակի մասին, և թե ինչպես, աշխատանքի որակից կախված, կարող է փոփոխվել աշխատավարձի չափը:

Պայմանավորվածությունների պահպանում

Ինչ վերաբերում է գործատուի կողմից պայմանավորվածությունների պահպանմանը, պետք է կրկին նկատել, որ մեկ ուղևորության ընթացքում, հաճախ միգրանտները մի քանի գործարք են ունենում: Ուղևորությունների մեծամասնության ընթացքում, ըստ մեզ ներկայացված տեղեկությունների, պայմանավորվածությունները պահպանվում են, սակայն լինում են դեպքեր, երբ գործատուն լիարժեք չի կատարում իր կողմից ստանձնած պարտականությունները:

Հիմնական խախտումները վերաբերում են աշխատավարձը ժամանակին վճարելուն: Երբեմն պատահում է, որ գործատուն պայմանավորված ժամանակից ուշ է վճարում աշխատավարձը, սակայն այս դեպքերի մեծամասնությունը միգրանտներն արդարացնում են:

Երկրորդ ամենահաճախ նշվող խախտումը վերաբերում է աշխատավարձի ոչ ամբողջությամբ վճարմանը: Սա,

անշուշտ, ոչ մի միգրանտ չի արդարացնում, սակայն որոշակի բացատրություններ տալիս է:

Պատահում է, որ գործատուն չի հրաժարվում աշխատավարձը վճարելուց, պարզապես ամիսներ շարունակ հետաձգում է, բայց չի տալիս: Լինում են դեպքեր, երբ աշխատավարձի մի մասը գործատուն համաձայնում է ուշ տալ, իսկ միգրանտն այդ ընթացքում այլ քաղաքում է աշխատում և նորից վերադառնալու ճանապարհածախսն ավելի մեծ է լինում, քան աշխատավարձի ստանալիք մասը, ինչի պատճառով միգրանտը չի գնում այն վերցնելու:

Ինչպես և պետք էր ակնկալել, պայմանների խախտումների դեպքում միգրանտները ոչինչ չեն անում, քանի որ քայլեր ձեռնարկելու նրանց հնարավորությունները խիստ սահմանափակ են: Նրանք ամենաշատը կարող են հրաժարվել աշխատանքից, կամ պարբերաբար հիշեցնել պայմանավորվածության մասին:

Հազվադեպ լինում են նաև հաճելի բացառություններ, երբ գործատուն անում է ավելին, քան պայմանավորվել են:

ԻՆՉ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐ ԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ

Այստեղ ևս հիմնականում կանգ կառնենք Ռուսաստանում աշխատած միգրանտների հիմնախնդիրների վրա, քանի որ (բացի այն, որ այնտեղ մեկնողների թիվն անհամեմատ մեծ է) Ռուսաստանում աշխատողների հիմնախնդիրներն ավելի շատ են:

Ոստիկանության հետ խնդիրներ

Ռուսաստանում աշխատող միգրանտների մեծամասնությանն ամենից շատ անհանգստացնում է ոստիկանությունը, որը հաճախ ստուգում է փաստաթղթերը, և, քանի որ միգրանտների մեծ մասն անհրաժեշտ փաստաթղթեր չունի, լավագույն դեպքում տուգանքի կամ կաշառքի դիմաց բաց է թողնում միգրանտին, վատագույն դեպքում տանում է ոստիկանություն, որտեղից միգրանտները կրկին կաշառքով են դուրս գալիս:

Եղել է, որ աշխատավարձն ուշացրել են, բայց այս վերջին ուղևորության ժամանակ աշխատավարձը տվել են: Անցյալ տարի Վայոց Ձորից 30 հոգու տարել էին և ոչ մեկի աշխատավարձը չեն տվել: Չեն տվել, որովհետև միջնորդի հետ կոնֆլիկտ են ունեցել: Ես այս տարի գնացի, այդ միջնորդից անկախ պայմանավորվեցի և ինձ վճարեցին և՛ այս տարվա համար, և՛ նախորդ:

Լևոն, 47տ., գ. Արփի

Ոստիկանները միգրանտներին սարսափեցնում են (հենց այս բառն են հաճախ օգտագործում միգրանտները) ոչ միայն այն պատճառով, որ լրացուցիչ ծախսի անհրաժեշտություն է առաջանում, այլ առաջին հերթին այն պատճառով, որ ոչ մի միգրանտ իրեն ապահովագրված չի զգում վատ վերաբերմունքից և մինչև անգամ ֆիզիկական բռնությունից: Հատկապես արտագնա աշխատանքի հաճախակի մեկնող միգրանտների համար էական է արտաքսման խնդիրը, որի դեպքում նրանք կարող են զրկվել գումար վաստակելու իրենց հիմնական միջոցից: Սակայն, փորձը ցույց է տալիս, որ, որպես կանոն, հարցն արտաքսմանը չի հասնում:

Ծայրահեղ ազգայնական խմբավորումներ

Հատկապես Մոսկվայում աշխատող միգրանտներին շատ հատուկ է անապահովության և վախի զգացումը: Ինչպես արդեն ասվել է վերը, միգրանտները խուսափում են տեղացիներից ընդհանրապես, սակայն առավել մեծ է զգուշավորությունն ու վախը ծայրահեղ ազգայնական խմբավորումներից կամ, ինչպես ընդունված է ասել, սափրագլուխներից: Թեև հարցված միգրանտներից քչերն են, որ ուղղակիորեն բախվել են նրանց հետ, Մոսկվայում աշխատողներից շատերը համոզված են, որ նրանց հետ հանդիպումը կարող է իրենց մահով ավարտվել: Նրանք, որպես կանոն, զիջերը դուրս չեն գալիս, խուսափում են ուշ ժամերին մետրո մտնել: Կան մարդիկ, ովքեր զգուշանում են միայն որոշակի օրերի (որոշ միգրանտների շրջանում տարածված էր այն կարծիքը, որ սափրագլուխները տարվա մեջ որոշակի օրերի հարձակվում են կովկասցիների վրա): Հարցված միգրանտների շրջանում կարելի է հանդիպել նաև «խիզախների», որոնք ասում են, որ նույնիսկ գիշերով չեն վախենում տանից դուրս գալ, թեև այս ձևակերպումը՝ «նույնիսկ գիշերները», արդեն իսկ ցույց է տալիս, որ մարդկանց մեջ որոշակի վտանգի ընկալում կա:

Մոսկվայում են ապրում նաև աղջիկ և բռնահիկներ: Ես նրանց համար էլ եմ անհանգստանում: Նրանց մեռնակ չենք թողնում դպրոց գնալ, մեքենայով ենք տանում, որ բան չպատահի:

Արմենուհի, 56տ., ք. Երևան

Երբ դուրս ես գալիս, չես զգում, որ մեջքիդ պետություն է կանգնած: Որ զնում ես, չգիտես ետ կգաս, թե չէ: Կարող են գլխիդ ինչ փորձանք ասես բերել: Նույնիսկ սովորական քաղաքացին, կարող է ասի՝ դու ով ես, ինչ ես անում այստեղ: Սև ես, դա արդեն վատ է:

Վահե 41տ., ք. Եղեգնաձոր

Կարոտ

Աշխատանքային միգրանտները շատ հաճախ են նշում, որ իրենց հիմնական խնդիրը եղել է ընտանիքից հեռու լինելը և կարոտի զգացումը: Թեև նրանց մեծամասնությունը խնդիր չի ունեցել ընտանիքի հետ հաղորդակցվելու, այնուամենայնիվ նրանք նշում են, որ իրենց պակասել է ընտանեկան մթնոլորտը, իրենց հարազատ կենցաղը, բարքերը և սովորույթները: Կարոտի զգացումը հատկապես զգալի է Հոգատար հայրերի և Հովանավորյալ միգրանտների մեջ:

Իմ գործը ես չեմ դժվարանում անել:
Բարոյությունը միայն այն էր, որ մարդկային
շփման կարիք ես զգում, հարազատներին ես
կարոտում, քեզ այնտեղ շատ օտար ես զգում:

Հայկ, 44, ք. Երևան

Այլ հիմնախնդիրներ

Նշված հիմնական խնդիրներից գատ, առանձին մարդիկ խնդիրներ են ունեցել ընդունող երկրի լեզվի չիմացության և բացատրվելու դժվարության առումով: Սա իհարկե ավելի հատուկ է ԱՄՆ և ԵՄ երկրներ մեկնողներին: Որոշ միգրանտներ առողջական հիմնախնդիրներ են ունեցել: Ռուսաստանում առևտրով զբաղվողների համար խնդիր է եղել ռեկետը: Սի խումբ միգրանտներ դժգոհում են ծանր աշխատանքից և կենցաղային վատ պայմաններից: Այս հիմնախնդիրներն իհարկե միգրացիոն բուն գործունեությանը չեն առնչվում, քանի որ կարող են հանդիպել նաև հայրենիքում, սակայն արտերկրում աշխատանքի ընթացքում դրանք ավելի սրված են լինում և ավելի հաճախ են հանդիպում:

ՀԵՏԱԴԱՐՉ ՀԱՅԱՅՔ

Որպես կանոն միգրանտների ճնշող մեծամասնությունը գոհ է լինում իր ուղևորությունից: Սա մի կողմից օրինաչափ է, որովհետև հիմնականում միգրանտները չեն վերադառնում, եթե վաստակած չեն լինում բավարար քանակությամբ գումար (անշուշտ տարբեր դեպքերում այդ գումարը տարբեր է լինում): Իհարկե, միգրանտների մեծամասնությունը գոհ է լինում իր գտած աշխատանքից և վաստակած գումարից, սակայն կան նաև միգրանտներ, հիմնականում Սիրողական և Երջանիկ միգրանտների մեջ, ովքեր գոհ են լինում նաև նոր մշակույթին ծանոթանալուց և իրենց մասնագիտության մեջ հմտանալուց:

Շատ միգրանտներ գտնում են, որ արտագնա աշխատանքն օգնել է իրենց փորձ ձեռք բերել իրենց մասնագիտության մեջ, ոմանք իրենց արհեստը սովորել են հենց արտագնա աշխատանքների ընթացքում: Որոշ միգրանտներ ասում են նաև, որ նորարարություններն ընդունող երկիր ավելի շուտ են

ներմուծվում, քան Հայաստան, ուստի արտագնա աշխատանքը, այս առումով, ավելի է նպաստում մասնագիտական զարգացմանը: Մյուս կողմից ընդունող երկրում ավելի բարձր են որակի չափանիշները, ինչը ևս նպաստում է մասնագիտական հմտությունների զարգացմանը: Ահա սրանք են այն հիմքերը, որ թույլ են տալիս միգրանտներին կարծել, թե արտագնա աշխատանքն առավելություն է տալիս և Հայաստանի աշխատանքային շուկայում բարձրացնում է իրենց մրցունակությունը:

Միգրանտների մի մասը՝ հատկապես «Ձուկը ջրում», Հովանավորյալ և Երջանիկ միգրանտների մեծամասնությունն ասում է, որ կցանկանար նաև ընտանիքով մեկնել ընդունող երկիր, որովհետև այնտեղ ավելի շատ պայմաններ են ստեղծված մարդկանց բարեկեցիկ կյանքի համար: Հոգատար հայրերը, եթե ցանկանում են ընտանիքը տանել, ապա դա հիմնականում ուզում են անել անընդհատ մեկնելու և վերադառնալու ճանապարհաձախսերը կրճատելու համար:

Հիմնականում, ընտանիքով մեկնելու ցանկություն չի ունենում Միքո-դական միգրանտների առաջին խումբը՝ Ռուսաստան մեկնած երիտասարդները, ինչպես նաև մի մասը նրանց, ովքեր աշխատում են Մոսկվայում և իրենց

Ես չեմ ցանկանա ընտանիքիս հետ մեկնել, որովհետև, չնայած երեխեքս ռուսերեն գիտեն, կինս էլ կիսով չափ ռուս է, բայց ինքն էլ է համարում, որ Հայաստանում ավելի ապահով է: Երեխաներս տղա են, տաքարյուն. գան Մոսկվա, անկախ իրենցից, կարող են կռվի մեջ ընկնել:

Մասիս, 40տ. ք. Գյումրի

Չեմ ուզի ընտանիքիս հետ մեկնել: Էնտեղ ընտանիքի տեղ չի: Ընտանիքս կփչանա:

Հրայր, 35տ., գ. Մոսապետ

ընտանիքի անվտանգությունը երաշխավորված չեն համարում: Ընտանիքը չտանելու այլ պատճառներ են օտարության զգացումը և հայրական տունը չթողնելու ցանկությունը:

Ռուսաստան մեկնողներին

- Եղեք բարի, համեստ, խելացի և հարգալից օտարի նկատմամբ:
- Հեռու մնացեք ազգայնականներից, շատ մի քայլեք քաղաքում, ձեր գործն արեք ու գնացեք տուն:
- Աշխատասեր եղեք, ճարպիկ: Այնտեղ ամեն ինչ արագ է, պետք է հասցնել: Դժվար կլինի, բայց եթե խելացի լինեք, կհարմարվեք:
- Ջգույշ եղեք, հետևեք ձեր առողջությանը: Ազգականներին չնուռանաք, հիշեք, որ ամեն ժամ ձեր մասին են մտածում:
- Գործի մասին մտածեք, ուրիշ բաների (խմել, աղջիկներ) հետևից չընկնեք, նորմալ սնվեք, նորմալ քնեք, որ կարողանաք լավ աշխատել:
- Ավելի լավ է չմեկնել, եթե լավ բարեկամներ չունեք, թե չէ գնալու եք ու շահագործվեք:
- Վստահելի մարդու մոտ գնացեք, նախապես իմանալով՝ ուր եք գնում:

Այլ երկրներ մեկնողներին

- Հարմարվեք արտերկրի աշխատանքային պայմաններին. աշխատանքից մի ուշացեք, եթե ԱՄՆ եք գնում, շատ ժպտացեք և, եթե հնարավոր է, շատ ճամփորդեք:
- Առաջին հերթին լեզուն սովորեք, շատ շփվեք տեղացիների հետ, ոչ թե միայն հայերի:
- Մանրակրկիտ ճշտեք մեկնելու պայմանները, ծանոթացեք տվյալ երկրի օրենսդրությանը, բարբերին:
- Եթե հնարավորություն է ստեղծվում կատարելագործվելու և նորմալ վաստակելու, երբեք չհրաժարվեք. հնարավորությունը չարժե ձեռքից բաց թողնել:
- Գալու է ժամանակը, որ ոչ ոք չի մեկնելու Հայաստանից, նույնիսկ դրսում եղածներն են վերադառնալու: Հայրենակիցներ, երբեք մի կորցրեք ձեր հույսը:
- Եթե ինչ-որ մեկը ցանկանում է մեկնել արտասահմանում աշխատելու, վատ գաղափար չէ: Գնացեք, աշխատեք, բայց վերադարձեք, քանի որ մենք ինչ-որ մեկին ինչ-որ բանով պետք ենք միայն մեր հողում:

ԳԼՈՒԽ 8. ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱ

ՄԱԿ-ի Անդրազգային Կազմակերպված Հանցագործությունների դեմ կոնվենցիային կից երկու լրացուցիչ արձանագրություններն անդրադառնում են միգրացիային: Արձանագրություններից մեկը վերաբերում է միգրանտերի ապօրինի տեղափոխմանը, իսկ մյուսը նախատեսում է սանկցիաներ նպատակի երկրներում միգրանտների շահագործման, նրանց հավաքագրման և աշխատանքի պայմանների վերաբերյալ:

Թրաֆիքինգի սահմանման հիմնական հատկանիշն այն է, որ վեջինս պահանջում է ոչ միայն «ուժի և հարկադրանքի» պայմաններ, այլ նաև այն, որ թրաֆիքինգով զբաղվող անձը կամ խումբը կարող է չարաշահել պոտենցիալ գոհի «խոցելի վիճակը»: Այսպիսով կարելի է ենթադրել, որ գոհի համաձայնության բացակայությունը չի պահանջվում: Անձը կարող է համաձայնել, բայց ակնհայտ է, որ նրա համաձայնության պատճառը հանդիսանում է իր իսկ խոցելիությունը:

Խոցելիության չարաշահման կոնցեպցիան Թրաֆիքինգի Արձանագրության մեջ թուլացնում է շահագործման կամավոր-հարկադիր դրսևորման սահմանումը և կարող է օգտագործվել որպես «համաձայնեցված շահագործման» դատապարտման միջոց:

Նշված պարագայում խոցելիությունը ներառում է իրավիճակների բավական լայն սահման՝ չքավորություն, սով, հիվանդություն, ցածր կրթական մակարդակ և տեղահանում: Սակայն դա չի նշանակում, որ միգրացիան ինքնին տանում է դեպի թրաֆիքինգ: Շատ դեպքերում գործատուի և աշխատողի հարաբերությունները արտաքուստ հարկադրական չեն, չարաշահումը ո՛չ ակնառու է, ո՛չ էլ մշտական: Ավելին՝ գոհը կարող է օգտվել որոշ ազատություններից՝ իր առջև դրված պարտականությունները կատարելու համար:

Այս հետազոտության շրջանակում կատարված հարցազրույցները ցույց են տվել, որ միգրանտները ծանոթ են եղել ընդունող երկրների միգրացիոն ռեժիմին և աշխատանքային օրենսդրությանը, ներառյալ Ռ-Դ, և գիտակցել են, որ նրանց անօրինական կեցությունը և անօրինական աշխատատեղը կսահմանափակի իրենց իրավունքները և ազատությունները: Միաժամանակ Ռ-Դ-ում աշխատող միայն մի քանի հարցված միագրանտներ են ունեցել օրինական աշխատանքի համար պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ կեցության և աշխատանքի թույլտվություն և աշխատանքային պայմանագիր:

Աշխատանքային միգրանտների ճնշող մեծամասնությունը հաշվառվել է որպես զբոսաշրջիկ և չի ունեցել աշխատանքի թույլտվություն: Այս խմբի միգրանտների մեծամասնությունը երբևէ չի երկարացրել կացության թույլտվության ժամկետը: Միգրանտներից մի քանիսը նույնիսկ նշել են, որ իրենց գրանցումը կեղծ է եղել: Օրենքը շրջանցելու հիմնական պատճառն այն

է եղել, որ կարիք չի զգացվել վատնել ժամանակ և փող օրինական գործընթացի վրա, քանի որ այն իրենից ներկայացնում է միայն բյուրոկրատական քաշքշուկ և իրավունքների պաշտպանության իրական երաշխիք չի հանդիսանում: Միգրանտները կարծում են, որ օտար երկրում չկա մեկը, ով պատրաստ է զբաղվել իրենց պաշտպանությամբ: Նրանք նշում են, որ իրավունքները, օրենքը և պաշտպանությունը կապված են միայն փողի հետ, և որ կաշառքը կարող է լուծել բոլոր խնդիրները:

Միգրանտներից ստացված ինֆորմացիան պարզորոշ ցույց է տալիս, որ աշխատանքային շահագործումը և աշխատանքային կանոնակարգերի խախտումը նպատակի երկրներում լայն տարածված է, չնայած որ միգրանտները, որպես կանոն դրանից չեն բողոքում: Մենք արձանագրել ենք բազմաթիվ դեպքեր, երբ միգրանտները քիչ են վճարվել կամ ընդհանրապես չեն վճարվել, ստիպված են եղել ապրել և աշխատել անընդունելի պայմաններում կամ վտանգել իրենց կյանքը, աշխատանքի են հրավիրվել կեղծ խոստումներով, աշխատավարձից պահումներ են ունեցել սեփական համաձայնությամբ կամ առանց դրա, կատարել են արտաժամյա աշխատանք, չեն ունեցել հանգստյան օրեր:³

Որոշ դեպքերում շահագործումը հանգեցրել է հարկադիր աշխատանքի տարբեր դրսևորումների: Այս առումով հետազոտության արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ կերպ: Նախ, որոշ բացառություններով, հարկադիր աշխատանքի տարբեր պարունակող իրավիճակները սովորաբար ուղղակի ֆիզիկական բռնության հետևանք չեն: Երկրորդ, միգրանտները հաճախ մուտք են գործել նպատակի երկիր՝ ընկերների, ծանոթների կամ ընտանիքի անդամների աջակցությամբ, որոնք գտնվում են այդ երկրում: Այս պարագայում նրանց աշխատանքային շահագործման խոցելիությունը շատ բարձր է, հատկապես այն ժամանակ, երբ նրանք ունեցել են անօրինական կարգավիճակ և մշտապես գտնվել են հավանական դեպորտացիայի վախի ներքո: Երրորդ, զոհերը հակված չեն հայտարարելու հարկադիր աշխատանքի փորձի մասին: Նրանք իրավապահ մարմինների հետ համագործակցելու շատ քիչ շարժառիթներ ունեն և շատ քիչ են տեղեկացված իրենց իրավունքների մասին:

³ Համապատասխան աշխատանքային ստանդարտները հիմնականում ամրագրվել են Աշխատանքի միջազգային կազմակերպության հետևյալ կոնվենցիաներում՝ C14 Weekly Rest (Industry) Convention, 1921, C47 Forty-Hour Week Convention, 1935, C52 Holidays with Pay Convention, 1936, C95 Protection of Wages Convention, 1949, C105 Abolition of Forced Labor Convention, 1957 և C106 Weekly Rest (Commerce and Offices) Convention, 1957: Բոլոր այս կոնվենցիաները վավերացվել և ուժի մեջ են մտել ՌԴ-ում:

Ի լրումն, հարկադիր աշխատանքը որոշ չափով կարելի է բնորոշել որպես «էթնիկ բիզնես»: Հաշվի առնելով իրավախախտներին պաշտպանող կուռ համայնքային կապերը, շահագործման և հարկադիր աշխատանքի դեպքերը ավելի դժվար է բացահայտել: Եվ վերջապես, հետազոտությունը ցույց տվեց, որ աշխատանքային շահագործման պատճառներից մեկն արտասահմանում առաջարկվող աշխատանքների մասին ինֆորմացիայի պակասն է և կախվածությունը անհատ միջնորդներից:

Վերը նշվածից կարելի է ենթադրել, որ աշխատանքային պայմանների և պահանջվող նվազագույն աշխատանքային ստանդարտների անհամապատասխանությունը կարող է դիտվել որպես աշխատանքային շահագործման ցուցանիշ:

Միգրացիայի օրինական ուղիների սահմանափակ հասանելիությունը նպաստում է միգրանտների հավաքագրման մասնավոր բիզնեսի աճին, որը երբեմն գործում է թրաֆիքինգի սահմանագծին: Աշխատանքային օրենսդրության տարատեսակ խախտումների հետ մեկտեղ հարցման մի շարք արդյունքներ ուղակիորեն վկայում են պարտքի գործոնի չարաշահման և այլ բռնությունների մասին: Չգալի թվով միգրանտներ նշում են, որ իրենց ճանապարհորդության արժեքը, բնակարանի վարձը, սննդի արժեքը պահվել են իրենց աշխատավարձից: Այս իրավիճակները կարող են առաջ բերել հարկադիր աշխատանք, եթե պարտքը ողջամտորեն չի նվազեցվում կատարվող աշխատանքի դիմաց: Անհատն ստիպված է լինում շարունակել աշխատանքը, որպեսզի վճարի պարքը, որը չի նվազում, այլ հաճախ նույնիսկ ավելանում է, քանի որ միգրանտը հարկադրված է լինում նոր պարտքեր վերցնել:

Գեայք 1.

Եղեգնաձորի Էլփին գյուղից 300 մարդ էին տարել Նախողկա՝ շինարարություն անելու: Մեծ ծրագիր էր, կոչվում էր «Սախալին 2 ԲՈԳՏ»: Աշխարհի տարբեր երկրներից շատ մարդիկ էին աշխատում այնտեղ: Մեր անձնագրերը վերցրել էին, որպեսզի գործի կեսից ոչ ոք չիրաժարվեր աշխատել: Աշխատանքը 9 ամիս էր տևելու: Մենք ապրում էինք հենց այնտեղ, որտեղ աշխատում էինք և երբեք տարածքից դուրս չէինք գալիս: Օրը երեք անգամ սնվում էինք իրենց ճաշարանում իրենց հաշվին և աշխատում էինք 12 ժամ: Նախաճաշից հետո գնում էինք շինհրապարակ, գրանցվում տվյալ օրվա համար և աշխատում մինչև ճաշը, որից հետո աշխատում էինք մինչև ընթրիքը: Գործատուները միշտ ստուգում էին մեր ներկայությունը: Եթե որևէ մեկը ուշանում էր կամ աշխատում 12 ժամից քիչ, աշխատավարձից գումար էին պահում: Մինչև մեկնելը մենք ծանոթացել էինք այս պայմաններին և համաձայնվել դրանց հետ:

Գեաղ 2.

Վանաձորից 40 և 44 տարեկան երկու տղամարդ 2003 թ.-ին մեկնել էին Ուֆա (Բաշկիրիա)՝ շինարարությունում աշխատելու:

Տարիքով ավելի մեծ միգրանտը նախկինում աշխատել էր այնտեղ: Նա գոհ էր մնացել ճանապարհորդությունից, որոշել էր նորից գնալ և առաջարկել էր իր քրոջ ամուսնուն գալ իր հետ: Գործատուն Ուֆայում ապրող մի հայ էր, որի եղբայրը ապրում էր Հայաստանում և հանդիսանում էր «քրիզադիր»՝ բանվորներ էր հավաքագրում եղբոր մոտ աշխատելու համար: Գործատուն պետք է հոգար ճանապարհորդության, սննդի, սենյակի բոլոր ծախսերը, որոնք հետագայում պետք է պահվեին միգրանտների աշխատավարձից: Նրանց խոստացել էին վճարել ամսական 150 ԱՄՆ դոլար, որից 100-ը գործատուն պետք է փոխանցեր Հայաստանում գտնվող միգրանտների ընտանիքներին (նրանք նշում են, որ 2003 թվականին 150 դոլարը բավականին մեծ գումար էր):

Միգրանտները կարծում էին, որ կունենան ապրելու նորմալ պայմաններ, սակայն ապրել են տնակում, որտեղ չկար ջուր, գուգարան և ջեռուցում: Մնունըը շատ վատն էր: Միգրանտները որևէ տեղ չէին կարողանում գնալ առանց գործատուին տեղյակ պահելու: Կարողացել են գնալ միայն աշխատանքի վայր և ետ վերադառնալ: Եթե երբևէ ցանկացել են գնալ խանութ, ապա նրանց ուղեկցել է գործատուի հայրը: Նրանք աշխատել են 1,5 տարի, բայց երբևէ գումար չեն ստացել: Գործատուն ամեն անգամ որևէ պատճառ է գտել չվճարելու, ասելով, որ կամ հաճախորդը չի վճարել իրեն, կամ որ միգրանտները լավ չեն աշխատել: Գործատուն նրանց անձնագրերը պահել է իր մոտ:

Միգրանտներից մեկը որոշ առողջական զանգատներ է ունեցել և ֆիզիկապես ի վիճակի չի եղել աշխատել շինարարությունում: Գործատուն ասել է, որ նա պետք է փոխարենը աշխատի իր հացի արտադրամասում: Միգրանտը ասել է, որ իրեն լավ չի գգում, սակայն գործատուն ստիպել է նրան աշխատել: Նրան հանգիստ են թողել միայն երբ վատառողջ լինելու պատճառով ձախողել է աշխատանքը և արտադրամասի աշխատողները բողոքել են գործատուին:

Մի անգամ միգրանտները մտադրված պտտվել են խանութի շրջակայքում, որպեսզի ուստիկանությունը նրանց նկատի: Նրանք բողոքել են ուստիկանությանը և օգնություն խնդրել, սակայն ուստիկանության աշխատակիցները ասել են, թե «նա ձեր հայրենակիցն է, զնացեք իր հետ խոսեք: Մեզ չի հետաքրքում, ինքը մեր փողը վճարում է»:

Հայաստան մեկնող մեկի հետ միգրանտներից մեկը նամակ է ուղարկել իր ընտանիքին՝ նկարագրելով իրադրությունը: Ընտանիքը դիմել է «Հույս և օգնություն» ՀԿ-ին: Վերջինս կապվել է իրավապահ մարմինների հետ, որոնք եկել են, խոսել միգրանտների և գործատուի հետ, պահանջել են վերադարձնել

միգրանտների անձնագրերն ու վճարել ետադարձ տոմսերի գումարը: Աշխատավարձն այդպես էլ չի վճարվել:

Դեպք 3

Գյումրիից 35 և 52 տարեկան երկու կին (հարևաններ) մեկնել են Ուրֆա, Թուրքիա:

Ճանապարհորդությունը միջնորդել էին երկու կանայք, որոնք հաճախ մեկնում էին Թուրքիա՝ առևտրի նպատակով: Միջնորդներից մեկն ասել էր, որ Թուրքիայում շատ լավ պայմաններով աշխատանք կա՝ մի շատ պարկեշտ թուրքի տանը միգրանտները պետք է զբաղվեին տնայնագործությամբ: Գործատուն պետք է վճարեր ճանապարհածախսը, իսկ միջնորդները պետք է նրանց ուղեկցեին: Սնունդը և կացարանը պետք է լիներ անվճար, իսկ աշխատավարձը՝ ամսական 500 ԱՄՆ դոլար:

Միգրանտները լեզուն չիմանալու պատճառով չեն կարողացել հաղորդակցվել գործատուի հետ, իսկ միջնորդը խոսել է գործատուի հետ և ասել, որ ամեն ինչ լավ է: Սակայն ընթացքում պարզվել է, որ բացի տնային աշխատանքներից, նրանք պետք է նաև խնամեն անասուններին: Միգրանտներից մեկը փորձել է հրաժարվել, սակայն մյուսը պնդել է, որ իրենց փող է պետք, և նրանք ի վերջո համաձայնել են կատարել առաջարկվող աշխատանքը:

Միգրանտները նշում են, որ գործատուն իրենց շատ լավ է վերաբերել: Երբ նրանցից մեկն առողջական խնդիր է ունեցել, գործատուն նրան իր միջոցներով տեղափոխել է տեղային հիվանդանոց, հոգացել ծախսերը, և հետո էլ թույլ չի տվել կատարել ծանր աշխատանք: Միգրանտի առողջական վիճակը լավացել է: Տանը աշխատում էին միայն միգրանտները և պահակը, որն էլ վերահսկելում էր նրանց աշխատանքը և հանձնարարություններ տալիս:

Միգրանտ կանայք նշում են, որ իրենց երբեք չեն ստիպել կարարել որևէ աշխատանք, և որ իրենց անձնագրերը միշտ եղել են իրենց մոտ: Նրանք ասում են, որ իրենց իրավունքները խախտվել են միայն աշխատանքի դիմաց չվճարվելու առումով:

Թուրքիա մեկնելուց մեկ ամիս անց միջնորդները եկել են, որ միգրանտներին տանեն Հայաստան՝ «մուտքի արտոնագիրը նորացնելու նպատակով», սակայն գործատուն չի համաձայնել: Միգրանտները լեզվին չտիրապետելու պատճառով չեն կարողացել լիարժեք հասկանալ երկխոսությունը: Միջնորդները վերադարձել են Հայաստան՝ խոստանալով գումար գտնել նրանց վերադարձնելու համար:

Միգրանտները խնդրել են գործատուին, որ նա տա որոշակի գումար՝ միջնորդների միջոցով իրենց ընտանիքներին փոխանցելու նպատակով: Գործատուն յուրաքանչյուրին տվել է 100-ական ԱՄՆ դոլար: Հետագայում

պարզվել է, որ ընտանիքներից միայն մեկն է ստացել գումարը, իսկ մյուս 100 դուլարը միջնորդները «ճանապարհին կորցրել են»:

Որոշ ժամանակ անց ոստիկանությունը եկել է, ստուգել միգրանտների անձնագրերը և ասել, որ իրենք պետք է դեպորտացիայի ենթարկվեն: Գործատուն փորձել է միջնորդել, սակայն համաձայնություն չի եղել և միգրանտներին տարել են ոստիկանություն: Գործատուն գնացել է նրանց տեսակցության, տարել է միգրանտների հագուստը և սնունդ: Իսկ երբ միգրանտները նրանից խնդրել են իրենց աշխատավարձը, գործատուն ասել է, որ արդեն վճարել է միջնորդներին, և որ միգրանտները պետք է գումարը նրանցից ստանան: Երբ Հայաստանում միգրանտները միջնորդներից պահանջել են աշխատավարձը, նրանք պատասխանել են, թե իրենք ոչ մի գումար չեն ստացել գործատուից:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Հետազոտության արդյունքները թույլ են տալիս գնահատել դիտարկվող ժամանակահատվածում միգրացիոն գործընթացում ներգրավված ընտանիքների ընդհանուր թիվը՝ 99,000-127,000 (կամ տնային տնտեսությունների ընդհանուր թվի 12.7-16.3%-ը): Դեպքերի ճնշող մեծամասնությունում (80.6%) ընտանիքի միայն մեկ անդամն է մեկնել արտասահման աշխատելու: Ընտանիքների 15.5%-ն ունեցել է երկու աշխատանքային միգրանտ և ընտանիքների միայն 1.8%-ն է ունեցել երեք միգրանտ:
- Ինչ վերաբերում է աշխատանքային միգրացիայի իրական տեմպին (աշխատանքային միգրացիայում ներգրավված բնակչության տոկոսը), ապա 2007 թ.-ի հետազոտության տվյալների համաձայն, հարցման հիմնական ընտրանքում ընդգրկված տնային տնտեսությունների անդամների 3.4%-ն է 2005-2006 թթ.-ին ներգրավված եղել աշխատանքային միգրացիայի գործընթացում: Այս տվյալը թույլ է տալիս մոտարկել աշխատանքային միգրանտների բացարձակ թիվը՝ 96,000–122,000 մարդ, կամ Հայաստանի մշտական բնակչության 3.0-3.8%-ը:
- 2005 թ. հունվար ամսից մինչև 2006 թ. դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում, միգրանտների մեծամասնությունը (51.6%) կատարել է երկու կամ երեք աշխատանքային ուղևորություն (40.1% և 11.5% համապատասխանաբար): Ստացված տվյալների համաձայն, արտերկրում աշխատելու նպատակով 2005 թ.-ին Հայաստանից մեկնել է 54,000-74,000 միգրանտ, իսկ 2006 թ.-ին՝ 60,000-81,000 միգրանտ: Ընդ որում, միգրանտների շուրջ 70%-ը մինչև 2006 թ. ավարտը վերադարձել է Հայաստան, և աշխատանքային միգրացիայի բացասական սաղոն կազմել է 29,000-35,000
- 2007 թ. հարցումը երկու կարևոր տարբերություն գրանցեց 2002-2004 թթ. և 2005-2006 թթ. միգրացիոն հոսքերի միջև. ա) աշխատանքային միգրացիայում գյուղական բնակչության ներգրավվածության աճ և բ) երևանաբնակ աշխատանքային միգրանտների թվի էական կրճատում: Ամենաբարձր միգրացիոն տեմպերը գրանցվել են Շիրակի և Լոռու մարզերում:

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

- Հարցման արդյունքների համաձայն, կին միգրանտների թիվը զգալիորեն կրճատվել է: 2002-2004 թթ. կանայք կազմում էին

աշխատանքային միգրանտների 14.1%-ը, մինչդեռ 2005-2006 թթ. կին միգրանտների թիվը կրճատվել է մինչև 6.5%: Այս տվյալների տարածումը բնակչության ընդհանուր թվի վրա թույլ է տալիս գնահատել կին և տղամարդ միգրանտների բացարձակ թիվը՝ 96,000-121,000 տղամարդ և 6,000-8,000 կին: Սա նշանակում է, որ աշխատանքային միգրանտ է տնտեսապես ակտիվ տղամարդկանց առնվազն 13.1%-ը և տնտեսապես ակտիվ կանանց՝ առավելագույնը 1.7%-ը:

- Միգրանտների տարիքի հետ կապված միգրացիոն առանձնահատկությունները հիմնականում չեն փոխվել: Միակ էական տարբերությունը 21-25 տարիքային խմբում գրանցված միգրացիոն ակտիվության աճն է: Արդյունքում, 2005-2006 թթ. ընթացքում արտերկիր մեկնած աշխատանքային միգրանտների մոտ կեսը պատկանում է 21-40 տարիքային խմբին, իսկ մյուս կեսն էլ՝ 41-60 տարիքային խմբին:
- Միգրանտների մեծամասնությունն ամուսնացած է (76.2%), դեպքերի մեծամասնությունում միգրանտը կամ ընտանիքի գլխավորն է (տղամարդ), կամ նրա որդին (42% և 45% համապատասխանաբար):
- Միգրանտների բաշխումն ըստ կրթամակարդակի գրեթե կրկնում է 2005 թ. տվյալները: 2005-2006 թթ. արտերկիր մեկնած միգրանտների 75%-ից ավելին ուներ միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն (43.3 և 33.0% համապատասխանաբար), և մոտ 20%-ն ուներ բարձրագույն կրթություն:

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԵԿԱՄՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- Աշխատանքային միգրանտների 41.4%-ը մինչև 2005 թ. աշխատել է Հայաստանում: Նրանց կեսից ավելին հիմնական աշխատանք է ունեցել, մինչդեռ մյուսներն ունեցել են սեզոնային կամ պատահական/մեկանգամյա աշխատանք: Հայաստանում աշխատանք ունեցած միգրանտների ամենամեծ խումբը (մոտ մեկ երրորդը) աշխատել է շինարարության ոլորտում:
- Հարցվողների մեծամասնությունը (60.2%) նշել է, որ Հայաստանում աշխատելու ընթացքում արտերկրում աշխատող իրենց ազգականների ամսական եկամուտը 50,000 դրամը չէր գերազանցում: Հայաստանում միգրանտների հաշվարկված միջին աշխատավարձը կազմել է 44,000 դրամ: Դեպքերի մեծամասնությունում (62.1%) Հայաստանում աշխատելու ընթացքում միգրանտները վաստակում էին տնային տնտեսության ընդհանուր եկամուտի կեսից պակասը (միջինում՝ 42.5%-ը):

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

- Միգրանտների մեծամասնությունը (70.4%) աշխատանքը գտել էր դեռևս մեկնումից առաջ: Այս խմբի միգրանտների մեծամասնությունը որոշակի պայմանավորվածություն է ունեցել նաև աշխատանքի նկարագրության, աշխատավարձի չափի և աշխատանքային պայմանների վերաբերյալ:
- Միջնորդավորված ուղևորությունների թիվը 55%-ից աճել է մինչև 65%: Մեծամասամբ միգրանտի ուղևորությունները կազմակերպել են ուղևորության երկրում ապրող ընկերները կամ ազգականները (28%): Միգրանտների 12%-ին այս հարցում աջակցել են ուղևորության երկրում բնակվող մասնավոր միջնորդները, իսկ 10%-ն օգտվել է հայաստանաբնակ միջնորդների ծառայություններից: Թեև Հայաստանում կամ արտերկրում գործող գործակալությունների ծառայություններից օգտվել է միգրանտների փոքրամասնությունը, նրանց տոկոսը 4.6%-ից (2002-2004 թթ.) աճել է մինչև 7%:
- Միգրանտների մեծամասնությունն արտերկրում աշխատել է 5-10 ամիս (68.9%) և ուղևորությունների միջին տևողությունը կազմել է 8 ամիս: Միգրանտների 75%-ից ավելին Հայաստանից մեկնել է զարման սկզբին, ընդ որում մեկնումների ամենաակտիվ ամիսը մարտն էր: Միգրանտների մեծամասնությունը (78%) վերադարձել է Հայաստան հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում, բայց ավելի հաճախ՝ ամանորի տոներին մոտ:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՒ ԵՎԱՍՏՈՒՏԸ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՒՄ

- Միգրանտների 80%-ից ավելին սկսել է աշխատել ընդունող երկիր ժամանելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Ավելին, միգրանտների 54.7%-ը աշխատանքն սկսել է առաջին իսկ շաբաթվա ընթացքում: Միգրանտների ավելի քան երկու երրորդը կատարել է սեզոնային կամ մեկանգամյա աշխատանք, և նրանց գերակշիռ մեծամասնությունն աշխատել է շինարարության ոլորտում:
- Միգրանտների աշխատանքային օրվա միջին տևողությունը կազմել է 10 ժամ: Միգրանտների մեծամասնությունն (52.1%) աշխատել է լրիվ դրույքաչափով (8-10 ժամ), յուրաքանչյուր երրորդ միգրանտն օրական աշխատել է 11-12 ժամ (37.3%), և միայն 6.4%-ն է աշխատել ոչ լրիվ դրույքաչափով (1-7 ժամ): Միգրանտների մնացած 4.1%-ը աշխատել է օրական 12 ժամից ավելի: Աշխատանքային միգրանտների միայն 46.4%-ն է ունեցել կանոնավոր հանգստյան օրեր, 35.6%-ը հազվադեպ է հանգստյան օրեր ունեցել, իսկ 18%-ն աշխատել է ընդհանրապես առանց հանգստյան օրերի:

- Միևգրանտների միայն 12%-ն է գրավոր աշխատանքային պայմանագիր կնքել գործատուի հետ: Դեպքերի ճնշող մեծամասնությունում հարաբերությունները գործատուի հետ հիմնված են եղել սոսկ բանավոր համաձայնության վրա, իսկ միգրանտների 9%-ն էլ նշել է, որ աշխատանքային հարաբերությունները որևէ կերպ չեն կարգավորվել:
- Հարցումը ցույց է տալիս, որ միգրանտների միջին ամսական եկամուտն ընդունող երկրում 2005 թ.-ի տվյալների համեմատությամբ աճել է ավելի քան 50%-ով (643 ԱՄՆ դոլար՝ 2005 թ.-ի 410 ԱՄՆ դոլարի փոխարեն): 2005-2006 թթ.-ին միգրանտների կեսից ավելին, արտերկրում աշխատելով, ամսական վաստակել է 400-800 ԱՄՆ դոլար: Այսպիսով, եթե միգրանտների միջին ամսական եկամուտը կազմում է 643 ԱՄՆ դոլար, իսկ ուղևորության միջին տևողությունը 8 ամիս է, ապա ստացվում է, որ մեկ ուղևորության ընթացքում միգրանտը միջինում վաստակում է 5140 ԱՄՆ դոլար: Միաժամանակ, շատ կարևոր է հաշվի առնել վերջին երկու տարիների ընթացքում ԱՄՆ դոլարի զգալի արժեզրկումը, որի հետևանքով բացարձակ թվերի աճը դեռևս չի նշանակում, որ միգրանտների իրական եկամուտներն ավելացել են նույն չափով:

ԴՐԱՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

- Ըստ հարցման արդյունքների, յուրաքանչյուր հինգերորդ միգրանտ վերջին ուղևորության ընթացքում չի կարողացել գումար ուղարկել ընտանիքին (19.5%, կամ գրեթե նույնքան, որքան 2005 թ.-ի տվյալների համաձայն՝ 18.8%): Այն միգրանտների մեծամասնությունը, ովքեր կարողացել են գումար խնայել արտերկրում, իրենց ընտանիքներին առաջին դրամական փոխանցումն են ուղարկել մեկնումից հետո մեկ կամ երկու ամիս անց (69.3%): Միգրանտների 86.2%-ը վերջին ուղևորության ընթացքում առնվազն մեկ անգամ դրամական փոխանցում է կատարել բանկի միջոցով, իսկ 15.5%-ը՝ գումարը է փոխանցել անհատների միջոցով:
- Ընդհանուր առմամբ, վերջին ուղևորության ընթացքում յուրաքանչյուր միգրանտ ընտանիքին ուղարկել կամ իր հետ բերել է միջինը 2720 ԱՄՆ դոլար, ինչը, դարձյալ բացարձակ թվերով, նշանակում է 2005 թ.-ի 1540 դոլարի համեմատ 75%-ով աճ:
- 5140 ԱՄՆ դոլար կազմող միջին եկամտի մոտ 47%-ը միգրանտները ծախսել են ուղևորության երկրում, իսկ մնացած 53%-ն ուղարկել են Հայաստանում ապրող իրենց ընտանիքներին:
- Հետազոտության տվյալների տարածման արդյունքում 2005-2006 թթ.-ին ընդհանուր առմամբ արտերկիր կատարված աշխատանքային ուղևորությունների թիվը գնահատվել է 114,000-155,000: Հարցման

արդյունքների համաձայն՝ այս ուղևորությունների 80.5%-ը (կամ 91,000-124,000 ուղևորություն) «արդյունավետ» է եղել: Հետևաբար, աշխատանքային միգրանտներից ստացված դրամական փոխանցումների ընդհանուր ծավալը դիտարկվող ողջ ժամանակահատվածի ընթացքում կազմել է 250-339 միլիոն ԱՄՆ դոլար, կամ 118-162 միլիոն դոլար 2005 թ.-ի և 131-177 միլիոն դոլար՝ 2006 թ.-ի ընթացքում: 2007 թ.-ի հարցման արդյունքների համաձայն 2005-2006 թթ.-ին միգրանտների դրամական փոխանցումների մոտ 60%-ը (կամ 149-202 միլիոն ԱՄՆ դոլար) կատարվել է բանկային համակարգով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԱՏՃԱՍՆԵՐՆ ՈՒ ՀՏԵՎԱՆՔՆԵՐԸ

- Վերջին տարիներին հայկական աշխատանքային շուկայի ընդհանուր զարգացմանը գույրընթաց, որոշակիորեն փոխվել են նաև միգրանտների՝ արտերկիր մեկնելու պատճառները: Թեև դեպքերի մեծամասնությունում միգրանտներին արտերկիր են տանում Հայաստանում զբաղվածության հետ կապված խնդիրները (93.5%) և միգրանտների հիմնական՝ «Հայաստանում աշխատանք չկա» փաստարկը դարձյալ ամենահաճախն է նշվում (46.5%), այնուամենայնիվ, միգրանտների մի նույնքան մեծ խումբ էլ (43.0%) նշում է, որ մեկնելու հիմնական պատճառը ցածր աշխատավարձն է:
- Որպես արտերկրում աշխատանք փնտրելու այլ պատճառներ միգրանտները առավել հաճախ նշել են Հայաստանի զարգացման հնարավորությունների բացակայությունը և մասնավոր ձեռնարկատիրությանը զբաղվելու խոչընդոտները: Ինչևէ, այս պատճառներից յուրաքանչյուրը նշել է հարցվողների ոչ ավել, քան 5%-ը:
- Ինչպես և 2005 թ.-ին, միգրանտների ճնշող մեծամասնությունն ասել է, որ վերջին ուղևորությունն ամբողջությամբ կամ գոնե մասամբ արդարացրել է իրենց ակնկալիքները (88.7%): Միգրանտների մեկ տասներորդն է միայն դժգոհ ուղևորության արդյունքներից:
- Միգրանտները մեծամասամբ պլանավորում էին օգտագործել խնայված գումարը՝ Հայաստանում ապրող ընտանիքների հիմնական կարիքները հոգալու համար: Յուրաքանչյուր չորրորդ միգրանտ պլանավորել է գումար վաստակել տան վերանորոգման համար, իսկ յուրաքանչյուր հինգերորդ միգրանտ խնայված գումարը ցանկանում էր օգտագործել երեխաների ուսման ծախսերը հոգալու կամ տևական օգտագործման իրեր ձեռք բերելու համար (օրինակ կահույք, կենցաղային տեխնիկա և այլն):

Թեև Հայաստանի աշխատաշուկայում վերջերս նկատվող զարգացումները որոշ չափով զսպում են աշխատանքային միգրացիայի տեմպը, այնուամենայնիվ ամեն տարի ավելի քան 60,000 հայեր լքում են հանրապետությունը՝ արտերկրում, առավելապես՝ Ռուսաստանում, աշխատելու կամ աշխատանք փնտրելու նպատակով:

Քանի որ աշխատանքային միգրացիայի հիմնական նպատակը Հայաստանում ապրող ընտանիքների համար ապրուստի միջոցների հայթայթումն է, միգրանտների մեծամասնությունը համաձայնում է աշխատելու և ապրելու ծանր պայմաններին և, ընդունող երկրներում ապրելու և աշխատելու օրինական գործընթացներից խուսափելով, վտանգում է իր իրավունքները: Սակայն միգրանտների «ռացիոնալ ընտրությունը» և համաձայնությունը դեռ չի նշանակում, որ նրանց պաշտպանության հարցը պետք է հանվի հասարակական քննարկումների օրակարգից:

Ուղարկող և ընդունող երկրների աշխատանքային օրենսդրությունները կիրարկելու միջոցով աշխատանքային միգրացիան կանոնակարգելը պետական կառույցների առաջնային խնդիրն է մնում: Վերջինիս հաջող լուծումը կնշանակի, մի կողմից, անկանոն միգրացիայի կանխման արդյունավետ լծակներ, և, մյուս կողմից, միգրանտների շահերի պաշտպանության երաշխիքներ:

Այսուհանդերձ, հաշվի առնելով մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտների առկայությունը, այս գործընթացը կարող է բավական երկար ժամանակ պահանջել, մինչդեռ ամեն տարի հազարավոր հայ միգրանտներ կանգնում են իրենց իրավունքների ոտնահարման, չարաշահումների և աշխատանքային շահագործման վտանգի առջև:

Ստորև բերված են որոշ հարցեր և մտքեր, որոնք կարող են քննարկման և հետագա քայլերի մշակման խթան լինել՝ կարճատև ժամանակահատվածում այս մարդկանց կյանքում փոփոխություն մտցնելու նպատակով:

- **Ինչպե՞ս կարելի է Հայաստանի քաղաքացիական հասարակությունն ավելի շատ ներգրավել գործընթացում:** Արդյունավետ կարող է լինել հասարակական կազմակերպություններին շահագրգռելը և կարողությունները զարգացնելը՝ աշխատանքային միգրանտներին խորհրդատվություն և գործնական աջակցություն ցուցաբերելու առումով:
- **Ի՞նչը կարող է օգնել ընդունող երկրներում միգրանտների իրավունքների պաշտպանությունը ուժեղացնելու գործընթացին:** Ընդունող երկրներում գործող ՀԿ-ները (ինչպիսին է, օրինակ, Ռուսաստանի հայերի միությունը) կարող են արժեքավոր օգնություն տրամադրել հայազգի աշխատանքային միգրանտներին, որոնցից

շատերը դժվար թե աջակցություն խնդրեն պետական մարմիններից՝ երկրում անօրինական կարգավիճակ ունենալու պատճառով:

- **Ի՞նչ այլ հետազոտություններ է հարկավոր իրականացնել:** Կարծում ենք, որ կարևոր է ա) ավելի մանրամասն քննել տարբեր միջնորդների դերը աշխատանքային միգրացիայի գործընթացում, և բ) հայազգի միգրանտների և նրանց գործատուների հետ հարցում իրականացնել ընդունող երկրներում:

- ...

- ...

- ...

ՆՇՈՒՄՆԵՐ

Աշխատանքային միգրացիան Հայաստանից 2005-2007 թթ.
Հետազոտություն

Մինասյան Աննա, Պողոսյան Ալինա, Հակոբյան Թերեզա, Հանչիլովա Բլանկա



Տպագրված է «ԱՍՈԴԻԿ» հրատարակչության տպարանում:
Ֆորմատ 60x84 1/32, Թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 300
Ք. Երևան, Դ. Փարպեցի 26/26 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am